

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20180

ՀԱՅ Բ. ԿՐԹԱՆԵՆ ԳՐԱԾԱՆ — ԶԻՆ Ի

ՓՆԶԻԿ  
ՏՈՂՄԻԿ ԵՐԳԵՐՈՒ



ԵՐԵՎԱՆ

1925

Երան. Ա. Երզնկա  
Գ. Ա. Երզնկա, Երան

691.99-132

Կ - 73



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ա. ԵՐԷՑԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԹԻԻ 1

8 891.99-192  
47-73



ՓՆԶԻԿ

ՏՈՀՄԻԿ ԵՐԳԵՐՈՒ

ՏՊԱՐԱՆ

Ա. ԵՐԷՑԵԱՆ

ՄԱՐՍԷՑԻ

1925

20 03

1634

11634



29325- Վ. Կ.



12295-58 +

— 3 —

## ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳ

— 0 —

Ազատն Աստուած այն օրից՝  
Երբ հաճեցաւ շունչ փչել,  
Իմ հողանիւթ շինուածքին,  
Կենդանութիւն պարգեւել:

Ես անբարբառ մի մանուկ՝  
Երկու ձեռքրս պարգեցի,  
Եւ իմ անդօր թեւերով  
Ազատութիւն զրկեցի:

Մինչ զիշերը անհանգիստ՝  
Օրօրոցում կապկապուած,  
Լալիս էի անզաղար,  
Մօրս քունը խանդարած՝

Խնդրում էի նորանից՝  
Բազուկներս արձակել.—  
Ես այնօրից ուխտեցի՝  
Ազատութիւնը սիրել:

Թո՛թով լեզուիս մինչ կապերն՝  
Արձակուեցան բացուեցան,  
Մինչ ծնողքս իմ ծայնից  
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասացի՝  
Ձեր հայր, կամ մայր, կամ այլ ինչ,  
«Ազատութիւն» դուրս թըռաւ,  
Իմ մանկական բերանից:



« Ազատութիւն » ինձ կրկնեց,  
Ճակատագիր վերեւից.

« Ազատութեան դու զինուոր  
Կամի՞րս զրուիլ այս օրից »:

« Ո՛հ, փշոտ է ճանապարհդ՝  
Քեզ շատ փորձանք կը սպասէ.  
Ազատութիւն սիրողին,  
Այս աշխարհը խիստ նեղ է »:

Ազատութիւն, զոչեցի,  
Թող որոտայ իմ գլխին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,  
Թո՛ղ դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախաղան՝  
Մինչեւ անարգ մահու սիւն,  
Պիտի դոռամ պիտ կրկնեմ,  
Անդադար՝ Ազատութիւն:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ



## Ի ԶԷՆ



Ազատութեան այն վառ սէրը  
Թունդ որոտայ իմ սրտում,  
Իմ հայրենեաց սուրբ անունը  
Ինձ պատերազմ է կանչում:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք,  
Ելէ՛ք, Հայկայ զաւակունք,  
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայ եղբարք,  
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ:

Ահա՛, եղբարք, հայ եղբայրներ,  
Առէ՛ք զըրան, սուր ու գէնքեր,  
Մահը դաշտում Շաւարշանայ  
Մեզի հրաւէր կը կարգայ:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եմ:

Ախ, հայրենիք, սուրբ անունըդ  
Անշէջ վառի իմ սրտում,  
Մեր հայ եղբարց շիրիմները  
Իրանց գիրկն են մեզ կանչում,

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եմ:

Այս օրերը մեր քաջ կեանքին  
Նուիրական թող լինին.  
Ով սիրում է Ազատութիւն՝  
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն:

Ելէ՛ք, ելէ՛ք, Հայկազունք, եմ:



## ԱԼԱԳԵԱԶ — ԷՋՄԻԱՇԻՆ

\*\*\*\*\*

Ալագեազ բարձր տեղ ա, եար,  
Զուրը հիւանդի դեղ ա, եար,

Ես սիրեցի, վայ, խալխը տարաւ իմ սիրամ եարը,  
Թէ որ Հառնեմ, վայ, ես կը մեռնիմ, իմ անուշ եարը:

Քեզի մեռնիմ էջմիածին,  
Ազատ անող Աստուածածին,  
Նանէ՛, նանէ՛, նանէ՛, նանէ՛ ջան :  
Նանու դարդեր սարերով է,  
Նանէ՛, նանէ՛, նանէ՛, նանէ՛ ջան :

Էրու՛մ եմ, վառու՛մ եմ,  
Ձեմ գնա նանէ ջան,  
Նանէ՛, նանէ՛ ջան :

## ԱԼԱԳԵԱԶ

— + —

Ալագեազ բարձր սարին  
Ձին ա՛ կիտուել կատարին.  
Սարի ճամբէք, բաց ելէ՛ք,  
Էրթամ, հասնեմ իմ եարին :

Ա՛խ, իմ ճամբէն քարոտ ա,  
Սիրտըս էրուած, եարոտ ա,  
Ղարբրի օրն ընի սեւ :—  
Ազիզ եարի կարօտ ա :

Եարիս տեսայ, լալիս էր,  
Հալիս, գըլխին տալիս էր,  
Ճամբայ տըւէք, ա՛յ սարեր,  
Ձեռով արի՛ գալիս էր :

Էն ի՞նչ դուշ ա էն քարին...  
Սիրտս կաթում ա արին,  
Ա՛յ իմ թառան, թեւ տուր ինձ,  
Թոնեմ, հասնեմ իմ եարին :

« Բանաստեղծութիւններ » 3. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

## Պ Յ Ր Ե Ր Գ

Ալագեազ սարն ամպել ա,  
վա՛յ, Լէ՛, Լէ՛. Լէ՛, Լէ՛, Լէ՛, Լէ՛, Լէ՛,  
Աղբէր իր ձին թամբել ա :  
Իմ մա՛յրիկ, ջան, իմ մա՛յրիկ, ջա՛ն :  
Աղբէր իր ձին թամբել ա,  
Եարոջ դռնէն անցել ա :  
Եարոջ դռնէն անցել ա,  
Ելե գաշտը՝ խաղցել ա :  
Ելե գաշտը՝ խաղցել ա,  
Անձրեւ եկե, թըրջել ա :  
Անձրեւ եկե, թըրջել ա,  
Արեւ զարկե՛ չորցել ա :  
Արեւ զարկե՛ չորցել ա,  
Քան կարմիր վարդ բացուել ա :  
« Հայ Գեղջուկ երգեր » Կ. Վ.



## ԱԼ ԱՅԼՈՒՂ



- Աղջիկ. Ալ այլուղըս կորաւ ձեր դուռ,  
Փոթոթեւ է սիրտս մըրմուռ,  
Բախտը ինձի գըցեց էս դուռ,  
Ջա'նօ, ջա'ն.  
Սիրուն տըղայ, տո'ւր այլուղըս :
- Տղայ. Ալ այլուղըդ էս չը գըտայ,  
Երդըւում եմ՝ Աստուած վըկայ.  
Ով գըտել է՝ թո'ղ բերի տայ,  
Ջա'նօ, ջա'ն.  
Սիրուն աղջիկ, քու այլուղըդ :
- Աղջիկ. Ալ այլուղըս եարս էր բաշխել,  
Ալ աբըշում շուրջը նաշխել,  
Պատկերս վըրէն էր քաշել.  
Ջա'նօ, ջա'ն.  
Սիրուն տըղայ, տո'ւր այլուղըս :
- Տղայ. Քու վարմունքին ի՞նչ անուն տամ,  
Քիչ է մընում որ անվերջ լամ.  
Մ'օտըս լինի՝ բերեմ կուտամ,  
Ջա'նօ, ջա'ն,  
Սիրո'ւն աղջիկ, քու այլուղըդ :

- Աղջիկ. Ա՛խ, ի՞նչ ասեմ իմ խորթ մօրըս,  
Կամ ի՞նչ պատմեմ ազիդ հօրըս.  
Խաբար կուտան շէկ եղբօրըս,  
Ջա'նօ, ջա'ն,  
Տըղա՛յ, տըղա՛յ, տուր այլուղըս :
- Տղայ. Սէրըդ ինձնէն վաղ է սառել,  
Տըւած խօսքէդ ետ ես դառել,  
Հաւատա՛ որ ես չեմ առել :  
Ջա'նօ, ջա'ն.  
Սիրո'ւն աղջիկ, քու այլուղըդ :
- Աղջիկ. Միւժտէդ կուտամ, այլուղըս բեր,  
Դու ամէն օր կեր կաթի սեր,  
Ինձի քարերուն մի՛ խըփեր,  
Ջա'նօ, ջա'ն.  
Անո'ւշ տըղայ, տո'ւր այլուղըս :
- Տղայ. Սեւուկ աղջիկ, սիպտակ հագիր,  
Ա՛ն այլուղըդ՝ վէրքըս կապիր.  
Սիրուդ գերի՝ ինձ մի՛ տանջիր,  
Ջա'նօ, ջա'ն.  
Էրուած աղջիկ, ա՛ն այլուղըդ :





## ԱՆՈՒՇ ՀՈՎԻԿ

(Նաւերգ)

Ահա՛ ելաւ լուսինն արծաթ  
Մութ ամպերու ստուերէն,  
Ահա՛ նաւակն ալ զեղազարդ  
Դուրս սահեցաւ ժայռերէն.

Անո՛ւշ հովիկ, փըչէ յուշիկ,  
Ու դէպ ինձ բեր բիւր բիւր ալիք:

Նաւակին մէջ իմ գեղունին  
Փռուած՝ անփոյթ՝ լուսնի տակ,  
Կը ձայնակցի իր կիթառին,  
Հնչուն ձայնով մը յստակ.

Անո՛ւշ հովիկ, փըչէ յուշիկ,  
Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ:

Ձայնով կ'երգէ սէր ու գգուանք,  
Համակ յուզում ու սարսուռ,  
Ալ թո՛ղ, աղջիկ, երգդ ու նուազ,  
Բոց աչքերըդ ինձ դարձուր.

Անո՛ւշ հովիկ, փըչէ յուշիկ,  
Ու դէպ ինձ բեր նաւն ու աղջիկ:

Լ. ՇԱՆԹ

## ԵՐԳ ՄԱՀՈՒԱՆ

—&gt;&lt;—

Ահա մօտեցան մահուան ժամերս,  
Ալ հեմ իմանար բոլոր ցաւերս.  
Կը զատուիմ քենէ, սիրուն ծաղիկս,  
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս:  
Ի՛նչպէս պիտի զատուիմ, սաստիկ է սէրս,  
Բայց օգուտ չունի, Աստուած է Տէրս:


Համբերէ քիչ մը, ո՛վ մահ սոսկալի,  
Ձե՛ս մեղքնար դու սիրան իմ ցաւալի.  
Համբերէ քիչ մը որ սէրս առնեմ,  
Եւ այնուհետեւ հանգիստ քուն ընեմ:  
Ի՛նչպէս պիտի զատուիմ, սաստիկ է սէրս,  
Բայց օգուտ չունի, Աստուած է Տէրս:

Երբ կը մտածեմ մէկ երկու ժամէն,  
Հողերն ու որդեր զիս պիտի ծածկեն,  
Ամէն կողմերս ծակեն ծակծակէն,  
Իմ մատաղ մարմինս մատաղ պիտ' ընեն:  
Ի՛նչպէս պիտի զատուիմ, սաստիկ է սէրս,  
Բայց օգուտ չունի, Աստուած է Տէրս:





# ԱՂԶԻԿ ԱՂՈՒՈՐ



Աղջիկ աղուոր, աղջիկ աղուոր,  
 Կայնել ես աղբերակին,  
 Հօ'դալլօ, ջա'ն, ֆօ'դալլօ,  
 Շող կը տաս աբեգակին.  
 Դա'լալլօ, ջան, դա'լալլօ,  
 Քո շող երեսին մեռնիմ,  
 Հօ'դալլօ, ջա'ն, ֆօ'դալլօ,  
 Ունքերիդ աղեղնակին:  
 Դա'լալլօ, ջան, դա'լալլօ,  
 Մագերդ ոլորել ա,  
 Աչքերդ բոլորել ա,  
 Երկ'օր ա, չէի տեսել,  
 Իմ սիրտը մոլորել ա:  
 Փող ես ուղուս, քեզ փոխ տամ,  
 Ոսկի տամ, ո'չ թէ հող տամ,  
 Թէ դըրան էլ հաւան չես,  
 Հողիս հանեմ, քեզ փոխ տամ:

\*\*\*\*\*

# ԱՂԶԻԿ ԵՄ



Աղջիկ եմ տանը դըրած,  
 Արծաթ եմ ոսկեջըրած  
 Նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,  
 Հօրս ու մօրքս ինչ ասեմ.—  
 Ճակատիս էս ա դըրած:  
 Սիրել եմ, առնում եմ սիրատէրքս,  
 Առնում եմ, չի տալիս անսիրտ մէրքս:  
 Սիրել եմ սիրականքս,  
 Սիրել, մընացել տանքս.  
 Ա'հ արա, երկի'ւղ արա,  
 Մի' էրի ջիւան ջանքս:  
 Մի ծառ ունիմ ծիրանի,  
 Քամին տերեւ կը տանի.  
 Քա'մի, ինձնից արի, տա'ր,  
 Անուշ հարիս մատանի:  
 Մատանի ոսկեջըրած,—  
 Այ տըղայ, դու ինձ դըրած.  
 Պատճառին ինչ մեղք ունի,  
 Ես քո սիրով շըղթայած:



# ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ

Աղջըկե՛րք, պար բըռնեցէք՝

Արմիկի երես գովեցէք.

Ա՛յ երես, չարմա՛ղ երես,

Դու մեզ չի թողնես սեւերես:

Բարձր սարէն պաղ ջուր կուգայ՝

Արմիկի երես կը լըւայ,

Ա՛յ երես, արե՛ւ երես,

Քո չափազով մեր սիրտ կ'երես:

Աղջըկե՛րք, պար բըռնեցէք՝

Արմիկի աչեր գովեցէք.

Ա՛յ աչեր, սիրո՛ւն աչեր,

Արեւի պէս փայլուն աչեր:

Աղջըկե՛րք, պար բըռնեցէք՝

Արմիկի կըռներ գովեցէք,

Ա՛յ կըռներ, ուժե՛ղ կըռներ,

Դուք կը շարժէք մեծ մեծ լեռներ:

Արմիկի կըռներն է հրետան,

Կը պատառի վազրի բերան.

Ա՛յ կըռներ, զըթոտ կըռներ,

Դուք կը բանաք մեզ փակ դըռներ:

Ո՞վ պատռեց վազրի բերան,

Արմիկ պատռեց վազրի բերան,

Վազրի բերան — ահա՛ այսքան —

Ժանիքները մէկ մէկ դերան:

Դ. ԱՂԱՅԵԱՆ.

# ՏՈՒՆ ԱՐԻ՝ ՏՈՒՆ ԱՐԻ՝

○○○○○○○○

Ամպել ա, ձիւն չի՛ գալի,

Մըթնել ա, տուն չի՛ գալի,

Հեռու ճանապարհի ես,

Աչքերիս քուն չի գալի:

Կանչում եմ, կանչում եմ, եա՛ր, արի՛, եա՛ր,  
Մուծն ընկաւ, տո՛ւն արի, անջիգա՛ր եար:

Էս գիշեր կ'անցնի դըժուար,

Կ'երթայ բարակ ու երկար,

Իմըս որ ա՛խ ու վախով,

Քոնըզ ինչպէս կ'անցնի, եա՛ր:

Չորերս ի վեր հանդեր ա,

Ջուրը տունըս քանդեր ա,

Շո՛ւտ արա, յե՛տ դարձիր, ե՛կ,—

Սիրածըդ տանն անաէր ա:

Ծաղիկ էի բաղի միջին,

Մի հատ էի թաղի միջին,

Գիշեր ցերեկ առանց քուն,

Գովում եմ խաղի միջին:

Երգ ասեմ եօթն ոտանի,


Մենակ քունս ս՞նց տանի,

Էգուց արի՛ մեր տունը,

Մատիզ շարեմ մատանի:



# ԾԱՄՈՎ ԱՂՋԻԿ



Ա՛յ աղջիկ, ծամո՛ւմ աղջիկ,

վա՛յ, ծամո՛ւմ աղջիկ,

Շաքարից համով աղջիկ.

Ընջաւոր, փընջաւոր, ա՛յ, ծամո՛ւմ աղջիկ:

Կարճըլիկ, կուրճըլիկ վա՛յ, համո՛ւմ աղջիկ:

Ունքերըդ խեւքըս տարաւ,

վա՛յ, խեւքըս տարաւ,

Թուխ աչքերըդ ծով աղջիկ:

Ընջաւոր, փընջաւոր, ա՛յ, ծամո՛ւմ աղջիկ:

Կարճըլիկ, կուրճըլիկ վա՛յ, համո՛ւմ աղջիկ:

Կապել ես քիրման գօտիկ,

վա՛յ, քիրման գօտիկ,

Մարդ չես թողնում քեզ մօտիկ.

Տեսքով ես, համով, հոտով,

վա՛յ, համով, հոտով.

Քան ըզձաղիկ խորոտիկ:

Գլուխդ բարձրը բըռնի,

վա՛յ, բարձրը բըռնի,

Շէկ տըղէն քեզի մեռնի.

Ինձի տան արար աշխարհք,


վա՛յ, արար աշխարհք.

Ես ուրիշին չեմ առնի:

«Հազար ու Մի խաղ»

Կ. Վ.

# ԱՆԻԻ ՈՂԲԸ



ԱՆԻՆ.—

Անի քաղաք նստեր կուլամ,

Ձի կայ ըսող՝ մի՛ լայ, մի՛ լայ.

Կ'ըսեն թէ, չէ՛, թող նստի լայ,

Ա՛խ, ե՞րբ լսեմ՝ մի՛ լայ, մի՛ լայ:

Շատ ցաւերով կ'այրիմ, տապիմ,

Չունիմ մէկ մարդ հաւատարիմ,

Որ խըղճալոյս դայ մօտենայ,

Գոնէ ըսէ՛ մի՛ լայ, մի՛ լայ:

Ա՛խ հայ տըղայ, խըղճա՛ ինձի,

Տե՛ս քո Անին ի՛նչալէս է.

Շերիք ես լամ, դու չը գլխա՛ս,

Չէ՛ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցան,

Լալէն աչքերըս կուրացան,

Որը մ'նալն ինձ վիճակուեցաւ,

Բախտըս խաղառ զիս մոռացաւ:


Կորուսեր եմ թաղաւորներ,

Ժողովեր եմ զըլխուս բուեր,

Որք միշտ կ'երգեն, «Անին անցաւ,

Անին անտէր աւերեցաւ»:

Ա՛խ հայ տըղայ, խըղճա՛ ինձի, Լեն.





Անին էի մարդաբընակ,  
Մնացեր եմ դառն աւերակ.  
Իմ լաց, իմ կոծ, իմ աղաղակ  
Անտէր սրբոց է նմանակ :

Երբեմն էի շատ աննման,  
Հայոց քաղաքն արքայական,  
Սյժմ աւեր, հիմնալատակ՝  
Նստեր կուլամ ես միայնակ :

Ա՛խ հայ տըղայ, խղճա՛ ինձի, *հւն*.

Եկար, տեսար, դարձեր կ'երթաս,  
Կալով կ'ըսես՝ «Բարեաւ մընաս».  
Աստուած սիրես, չը մոռանաս,  
Մասիս սարին երբ մօտենաս՝

Առա՛ իմ քաջ Արարատին,  
Նստեր կուլայ քո խեղճ Անին.  
Կ'ըսես՝ ե՛րբ դաս աւետիք տաս,  
Թէ՛ «իմ Անի, հերիք է լաս» :

Ա՛խ հայ տըղայ, խղճա՛ ինձի, *հւ*

ՀԱՅ ՏՂԱՆ.— Ողբերգութիւնդ հերի՛ք, Անի,  
Թըշուառացեալ զու լաս քանի՛,  
Օր մը զըթած աչն Անեղին  
Մարգասիրեալ՝ առ քեզ հայի :

Գան ժողովին Հայք միաբան,  
Գեղեցկանաս շատ աննման.  
Հապա մի՛ լար, սիրուն Անի,  
Անի՛, Անի, իմ ջան Անի :

Ա. Վ., ԱՐԱՐԱՏԵԱՆ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Այգուն, այգուն իմ խըցկի մօտ,  
Լուսածըպիտ մինչ ցառաւօտ,  
Երգէ պըլպուլն իմ Սխուանայ՝  
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛ :

Գարուն կուգայ, ծաղկունք փթթին,  
Դաշտերու մէջ, ի ծոց հովտին,  
Բայց պըլպուլիկն իմ դեռ ողբայ  
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛ :

Ախ այն վարդին կարմիր թերթեր,  
Արեամբ նախնեաց են ներկուեր,  
Եւ այն ցօղեր որ կը կաթին,  
Սրիւնն են, արցունքն են Չապէլին :

Լո՛ւռ կաց, պըլպուլ, ա՛լ մի՛ երգեր,  
Մի՛ նորոգեր մեր հին վիշտեր.  
Լուռ կաց, քո տաղ վէրքեր բանայ՝  
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛ :



Օ Ր Օ Ր

Անուշ քնիկ աչերն առեր,  
Անուշ հովերն ալ տարուեր.  
Իմ տատրակիս քունն է եկեր,  
Անուշ երգով ըսեմ օրօր:

— Ես քունն չունիմ, անդո՛ւթ մայրիկ,  
չերիք աչերս կապես, հերի՛ք.  
Մէկ պահիկէն կ'ընեմ պաճիկ,  
Զիս արձակէ, մ'ըսեր օրօր:

— Մինչեւ չի լան մատաղ մանկտիք,  
Ծիծ չեն ի տար անոնց, Գառնի՛կ,  
Դուն չլացած, իմ մէկ հատիկ,  
Ես ծիծ կուտամ, կ'ըսեմ օրօր:

— Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,  
Կը ճըւճըւամ դուն չես լսեր.  
Անուշ ձայնիդ ես զմայլեր,  
Ես կուլամ, դուն կ'ըսես օրօր:

— Արցունքներդ մարգարտի պէս  
Երեսդ ի վար ի՞նչ կը թափես.  
Մի՛ լար ձագուկ, մի՛ լար, մեղք ես.  
Ով կ'ուզես ան ըսէ օրօր:

— Գիրկդ ինձի հանգստարան,  
Ծիծերդ բերնիս անուշ ծորան.  
Իրիկուան դէմ պառկիմ օրրան.  
Աչքըս գոցէ, ըսէ օրօր:

— Քնացնեմ իմ աղանիս,  
Մեծացնեմ սիրով որդիս.  
Կարմիր վարդի նման բացուիս,  
Շուքըդ նստիմ, ըսեմ օրօր:

— Բիչ մը թուլցուր թեւերս, ոտքերս,  
Ալ թմրեցան փափուկ մտերս,  
Անուշ մըրափն առնէ աչերս,  
Ապա սեղմէ, կարդա օրօր:

— Այդ սուտերովդ չեմ խաբուիր ես.  
Կ'ուզես որ զիս նստեցնես,  
Զի քնանաս, ծիծս ուտես,  
Դատարկ տեղը ըսեմ օրօր:


— Բիչ մը ճորճոր, քիչ մը ճարճար,  
Բիչ մը տանտան, քիչ մը պարպար,  
Բիչ մ'ալ պապան՝ առ հօպսա տար,  
Բիչ մ'ալ մէնմէն, ետքը օրօր:

— Այդ քու լեզուդ կ'ուտեմ հիմա,  
Քու կանդունովդ կտաւ չկայ.  
Տանտան, մէնմէն ալ հարարա,  
Աչուկ պահպահ, ըսեմ օրօր:

— Սիրտդ քար է, ալ հասկցայ,  
Լացի, լացի, ճար չգտայ.  
Ալ քնանամ, ճարը չկայ,  
Էրկա՛ն, էրկա՛ն ըսէ օրօր:



# Պ Ա Ր Ն Ա Ի Ա Ս Տ Ե Ա Յ



Աշխոյժ նաւաստին

Անվեհեր ճակատ՝

Ընդդէմ փոթորկին,

Երգէ անփոյթ, զուարթ :

Լա՛րիժ, Թիւմպէրէլէլէլէ, հա՛, հա՛, հա՛ :

Կոհակք փրփրադէղ

Ձեն սոսկում վախ մեզ,

Հողմունք սաստկահար

Գրգռեն մեզ ի պար :

Լա՛րիժ, Թիւմպէրէլէլէլէ... եւայլն :

Օ՛ն, խըմենք զուարթ,

Գինին մինչ յատակ.

Օ՛ն, զրկենք զիրար

Պարենք անդադար :

Լոկցէ՛ք, զխոցէ՛ք,

Մինչդեռ մենք հոս եկած ենք.

Ահա ծերն՝ իւր ոտքերն,

Հոս հոն շուտ՝ տանի փոյթ :

Ա՛յ, ա՛յ ա՛յ, պիտ՝ իյնայ,

Օ՛ն, բռնենք՝ մեղք է մե՛ղք.

Հա՛ հա՛ հա՛ կը խընդայ,

Ամէնքս ալ ծափ զարնենք :

Ձանգակն ուժղնապիրկ

Կոչէ մեզի կարգ,

Վերջ տանք խընդուլթեան,

Քաշենք մեր պարան :

Լա՛րիժ, Թիւմպէրէլէլէլէ... եւայլն :

.....

## Ա Ռ Ա Ի Օ Տ Լ Ո Ր

Առաւօտ լոր մըտաւ արա,

Վա՛խ,

Աչքբոս աստ եղաւ զարդ,—

Վա՛խ :

Կու նմանէր քաֆուր վարդ :

Վա՛խ :

Լորի՛կ լոր, լորի՛կ լոր, լորի՛կ լոր, լորիկ,

Կանաչ լորիկ, կարմիր լորիկ,

Անուշ լորիկ, սիրուն լորիկ,

Վառ վառ լորիկ, լորիկ լորիկ :

Լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լորիկ :

Առաւօտ բարի լուսուն,

Ես մայիլ եմ քո տեսուն,

Լո՛րիկ, դու իմ սրբաւի սուն :

Առաւօտ բարի լուսուն,

Քո խալան հարիւր յիսուն,

Համբի զնի վեր քուրսուն :

«Հազար ու Մի խալ»

կ. վ.



# ՀԱՅ ՔԱՂՈՐԴԻ

Ապառաժուտ լերան մը կող  
Յեցեալ ի քար գերեզմանի՝  
Անք մերթ յերկինս եւ մերթ յերկիր  
Խարտիշագեղ կայր պատանի :

Ո՛վ դու որդիդ լերանց, հովտաց,  
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած :

Կ'ուզե՞ս որ մեծ փոթորեկեալ ծով  
Մատուցանէ քեզ մխիթար,  
Կոհակաշարժ իր լարերով  
Երգեալ ի շունչ մրդկավար :

Ո՛վ դու որդիդ, եւն :

Կ'ուզե՞ս որ քեզ անհրաշտք  
Խնդայ կամարն աստեղց անթիւ,  
Եւ բնութիւն պայծառ զարդուք  
Ժպտի ծագկամբ եւ գեփիւսի :

Ո՛վ դու որդիդ, եւն :

Կամ փափկազոյն այլ սփոփանք  
Մը՞թէ կ'ուզես մօր քաղցուէնի  
Ու սիրունայ անոյշ դուստնք  
Որ քու կսկիծդ փարատի :

Դեռ ի՞նչ կ'ուզես, ո՛հ, մի՛ ծածկեր...

— Կ'ուզեմ վառօդ եւ զնդակներ :

Մ. ՊԵՏԻԿՈՍՅԱՆ

# ՀԱՐՍՆԵՐԳ

Նորափեսայ.—

Առաւօտուն բարի լուս,  
Առտուն արեւն ամենուս,  
Թող զո՛ւս զայ լուս թշնամու :

Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ,

Թող զո՛ւս զայ  
Լուս թշնամու :

Լո՛րիկ

Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լո՛րիկ,  
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լո՛րիկ  
Լո՛ր իմ, լո՛ւս լո՛րիկ :

Նորափեսայ.—

Հագա՛ր էրնէկ էն աւուր,  
Տալուլ—զունս հալեցուցին,  
Կանաչ—կարմիր հալեցուցին,  
Տարան ժամը կայնեցուցին,  
Աւետարան կարդացուցին,  
Ձեռը ձեռին տընցուցին :

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ :



Նորափեսայ.—

Լո՛ր իմ, լո՛ր բիկ, սիրուն լո՛ր բիկ,  
Լո՛ր բիկ, լո՛ր բիկ, լո՛ր իմ, լո՛ր բիկ,  
Լո՛ր իմ, լո՛ւս լո՛ր բիկ :

Առաւօտուն բարի լուս,  
Բարեւ ասա բարեւուս,  
Բարին հասնէ արեւուս :

Առաւօտուն բարի լուս,  
Արեւն ելաւ սարի ուս,  
Արի՛, երթա՛նք, դար ի դուս :

Առաւօտուն բարի լուս,  
Աստուած պահէ մեր երկուս,  
Լո՛ր, ոսկի սուն իմ հոգուս :

Առաւօտ բարի լուսուն,  
Քո հալան հարիւր յիսուն,  
Համբի զնի վըր քուրսուն :

«Հայ Գեղջուկ երգեր»

կ. վ.



## Գ Ե Ղ Ջ Ո Ի Կ

Առտուն կանուխ թէ ելնենք  
Քաղցր է վաստակը դաշտին,  
Զուարթ կ'ըլլանք ու կ'երգենք  
Գեղջուկ երգերը մերին :

Անցաւ գիշեր մութ ու սեւաւ,  
Ժպտին դաշտերը մերին,  
Պայծառ արեւ ծագեցաւ  
Կանաչ լեռան վրայէն :

Ելլենք աշխոյժ ի մեր երկ  
Հրաւէր կարգան թոջնոց երգ,  
Աշխատութիւնը դաշտին  
Սիրուն դանձ է աղքատին :

Թող ճոխն անդին նիրհէ խոր  
Հեշտութեանց մէջ նորանոր,  
Անոր կեանքին չեմ ցանկար  
Թէ սոխ ուտեմ ամէն օր :

Մշակին կեանք ոսկի է,  
Խաղաղ անփոյթ ու անդորր,  
Գեղջիկունուն երգ դայլայլ է  
Սոխակի մը տարփաւոր :

Թող ճոխն առտուն սթափի,  
Իր խոկն ունի ու վիշտեր,  
Բայց այս կեանք կը նմանի  
Վերի կեանքին ցանկալի :



Առտուն կանուխ թէ կլենք  
Քաղցր է վաստակը դաշտին,  
Զուարթ կ'ըլլանք ու կ'երգենք  
Գեղջուկ երգերը մերին :

### ԻՄ ԶԻՆԱՐԻ ԵԱՐԸ

Արեւ թըմվըռելով ելաւ,  
Իմ չինարի եարը,  
Մեր բանը կըռուով ելաւ,  
Դարգիման եարը,  
Թըշնամու որդին մեռնի,  
Իմ չինարի եարը,  
Իրա չար սըրտով ելաւ :  
Դարգիման եարը :  
Իմ չինարի եարը, իմ չինարի եարը,  
Իմ չինարի եարը, զովական եարը :  
Ճըրազը վառայ, վառայ  
Հօր հետ վատամարդ դառայ,  
Սէր ու աղբէր թող տըի,  
Ես իմ սիրածին առայ :  
Քարաւիի ծէրին կանչի,  
Թո՛ղ թըշնամին ամանչի,  
Արեւի՛դ մեռնիմ, եա՛ր ջան,  
Զինարի պէս կանանչի՛ :

«Հայ Քնար»

Կ. Վ.

### ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳԸ



Արի՛ իմ սոխակ, թո՛ղ պարտէզ, մերին,  
Տաղերով քուն բեր տըղիս աչերին.  
Բայց նա լալիս է—դու, սոխակ մի՛ դալ.—  
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ :

Եկ, արեղածագ, թո՛ղ արտ ու արօտ,  
Օրօրէ տղիս, քնի է կարօտ.  
Բայց նա լալիս է. դու ձաղուկ մի՛ դալ,  
Իմ որդին չուզէ արեղայ դառնալ :

Թո՛ղ դու տատրակիկ, քո ձագն ու բունը,  
Վուլուով տղիս բեր անուշ քունը.  
Բայց նա լալիս է. տատրակիկ մի՛ դալ.  
Իմ որդին չուզէ սղաւոր դառնալ :


Կաչաղակ՝ ճարպիկ, գող, արծաթասէր,  
Շահի զրուցով որդուս քունը բեր.  
Բայց նա լալիս է. կաչաղակ մի՛ դալ,  
Իմ որդին չուզէ սովաղար դառնալ,

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բագէ,  
Քո՛ւ երզը գուցէ իմ որդին կ'ուզէ...  
Բագէն որ եկաւ՝ որդիս լսեցաւ,  
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ :

ԳԱՄԱՌՔԱԹԻՊԱ



# ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Ազատութեան սիրոյն համար  
Շատ արիւններ թափուեցան,  
Անմեղ հայրեր ու զաւակներ  
Եկան այստեղ թաղուեցան :

Ահա եղբարք ես ալ կ'երթամ  
Ազգիս համար մեռնելու,  
Ազատութեան սիրոյն համար  
Ամբողջ կեանքս զոհեցու :

Գերեզմանիս հողին վրայ  
Թափէ արցունք իմ մայրիկ,  
Սրբո՛ւէ ծաղիկ բուրումնաւէտ  
Նահատակ եմ ես յաւէտ :

Ահա այսօր հայ եղբայրներ  
Կուգան այստեղ ողբալու,  
Նահատակաց հողին վրայ  
Աղի արցունք թափելու :

Ո՛վ եղբայրներ, դուք ալ ելէք  
Գերեզմանի խորերէն,  
Ուրախացէ՛ք եւ ցնծացէ՛ք  
Ազատութեան զոհերէն :

# ԵՐԳ. ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արե՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,  
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք.  
Որ ազգն երբ զանի փրկարար գոչեց,  
Նոր հողի, նոր կեանք անոր պարգեւեց :

Եկէ՛ք բարեկամք, առ բարձեալն Աստուած,  
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սըրտէ բըխած :  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու սահմանադրութիւն :

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան  
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.  
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց  
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց :

Յառաջ զիմութեան բացաւ ասպարէզ,  
Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ՝  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Ջնջեց ամենայն կարծիք անձնական,  
Խեղդեց ամենայն ձայն անհատական.  
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին՝  
Առաջնորդ լինել զորո՞ց ազգային :

Այն որ Աստուծոյ ձայն տուաւ մեզի,  
Մենէ թող առնու ձայնով մ'այնպիսի.  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :



Հայերս անարգուած փրկեց բարձրացուց,  
Մարդկային կոչման մեզ արժանացուց.  
Շնորհեց մեզի դոր ազատն Սատուած,  
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած :

Որուն շնորհին յարգ ստացանք մենք.  
Սնոր յարգ տալով աղբիւնք ու երգենք՝  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Դո՛ւ ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,  
Այ ալեւհետեւ մի՛ սգար լռիկ.  
Զի ա՛լ քու որդիք նոր ողբով բերկրեալ՝  
Զքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ :

Ալ մի՛ լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ.  
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ՝  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Հայե՛ր, մլ'անանք, մեր մօր հետ օրհնենք,  
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.  
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,  
Թող վարեն ուրախ կեանք մը բարունակ :

Թո՛ղ եւ մեր որդիք հետ անոնց անուան,  
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան՝  
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ  
Ազգն ու Սահմանադրութիւն :

Յ. Գ. ՍՐԺԱՃԵԱՆ

ԲԱ՛Մ. ՓՈՐՈՏԱՆ

ՎՐԷԺ Ի ՇԱԽԱՎՇԱՆ

Բա՛մ. փորձաւոր բարձուստ բոմբիւնք  
յԱյրաբատեան դաշտն ի վայր.  
Արի արանց արիւնք յեռանդն առատանան  
ի հրազայր.

Հրաւէր հայրենեաց հըռչակի՝ նդհանուր,  
Հողիք Հայկազանց բորբոքին ի հօր.  
Որք երկնաւորի պսակին էք կարօտ,  
Որք երկրաւորիս փառաց երկնայորդ.

Հապ՛օ՛ն արի արանց մանկունք՝  
Հայրենավրէժբըզ Հայկազունք :  
Հապ՛օ՛ն ի զէն զունդազունդ,  
Յեռեալ ի պար թունդ ի թունդ.  
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՛ն անդր յառաջ,  
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի ձախ մի յաջ,

Օ՛ն անդր յառաջ,  
Մի ձախ մի յաջ,  
Օ՛ն անդր յառաջ,  
Յառա՛ջ, յառա՛ջ,  
Հապ՛օ՛ն, յառաջ :



Հայկեան փանդոանց որոտընդոտ դռնէին  
 բարբառք մարտազոտ.  
 Դատնազոտն անդրաձայնէ Պարսիկ կերկեր  
 Ի շեփոր.

Շարժեն հրեշտակք թեւս լուսափողփողս,  
 ձիւաղք ճիւղաց կայտուն ի դժոխս.  
 Շոխըն շանթառաք զեթերօք փարի,  
 Սարսափեն սանդարք ի խօլ խաւարի:  
 Հապ'օն արի արանց մանկունք, եւն.:  
 Ի դուպարել մաքտայարդար դարշապարաց  
 Արամայ,  
 Գոռան Կորդրիք, մոնչեն Մասիք, հոքնչեն սահանք  
 Երասխայ.

Ի գրոն ի գրոն տալ բիրբուցն ոտնատրոփ,  
 Տատանին դաշտակք, յառնէ շոխըն ապշոպ.  
 Կոռւփ առ կոռւփ կոփեն կմբայք տէգ առ փէգ,  
 Դոքորք առնուն տարերք կորովեացն ի վէգ.

Հապ'օն արի արանց մանկունք, եւն.:  
 Արք աղեղանց, բարձր ի թիրախ թոռաջիւք՝  
 Վերջին ձեզ խրախոյս,  
 Առեալ տարցուք զանթիկնադարձդայս վարդապոյս  
 դրօշն անխոյս՝

Ի վերայ յիսնից յաղթից Վարդանայ,  
 Պարսկատանջ բազկաւ արւոյն Վահանայ,  
 Շեշա ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան  
 Տընկել յաղթանակ անմահ Հայութեան :

Հապ'օն, արի արանց մանկունք,  
 Հայրենավրէժքը Հայկազունք,  
 Ի Շաւարշան գունդազունդ,  
 Յեռեալ ի պար թունդ ի թունդ,  
 Ի յաղթանակ, օն անդր յառաջ,  
 Ի յաղթանակ, մի ձախ մի յաջ.

Օն անդր յառաջ,  
 Մի ձախ մի յաջ,  
 Օն անդր յառաջ,  
 Հապ'օն, յառաջ,  
 Ի յաղթանակ :

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ





# ԽԱՆՈՒՄ ԵՒԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս ելայ, Ալադեադ տեսայ,  
Խանում Եւա ջան,

Աբարանը աչերին դուման է դառել  
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,  
Լալով ողբալով, դոչ ու բարխանով,  
Սարեր ման գալով, քեզնից գատուելով  
Ընկեր ճարելով, դոչ ու բարխանով :  
Մէկզին ոչխարք կ'արածին մէկզին դառները,  
Խանում Եւա ջան :

Կանաչել են ծաղիկները, ծառերը,  
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,  
Լալով ողբալով դոչ ու բարխանով,  
Ընկեր ճարելով, ընկեր ճարելով,  
Ջէնքեր շարժելով, Սատուած կանչելով :  
Արի գնանք քու ման գալած արտերը,  
Խանում Եւա ջան,

Քեզի տեսայ նորացան իմ դարդերը.  
Դուն կեցիր բարով եւայլն :  
Ես աղէկն եմ, Չամլըխեցի մի ջիւան,  
Խանում Եւա ջան,

Բրոնին տարան էստուց չուրի Երեւան,  
Չեո ու ոտըս կապին բերդը զըրեցին,  
Դուն կեցիր բարով եւայլն :  
Չուխա շալվար, լալով տունը բերեցին.  
Օրե'ր, գարնան օրեր, դուք ո՞ւր էք կորեր :

# ՍԻՐԱՀԱՐ ԿԻԿՕՆ

Բլբուլ թռաւ բարձր քեարին,  
Կուլայ դարտեր իւր ջիկերին.  
Ես լէ խուրպան կեղնիմ եարին,  
Ծիկ մօտ տարէք Սիփնա սարին :

Սիփնա սարեր դուման մըժ է,  
Ես ա'խ կենիմ, էն լէ փօշ է,  
Կասեն արախ դարտին խօշ է.  
Էլպէթ Կիկօն ճիպ սէրխօշ է :


Ես սէրխօշ եմ սիրով էնջախ,  
Քօռ ու ջահնամ աղնի արախ.  
Եար դու մարես իմ տան օջախ,  
Քեզնից մահըում կէնիմ ա'խ-վա'խ :

Եարս որ կէնէր կիջնէր պախսան.  
Կու սառսոար ճայտին մախսան,  
Աչից շողքէն խովցաւ իմ ջան,  
Իմ հեշտ կեանքի տուեց վախսան :

Կիզեամ, եար նստեր վըր խոտին,  
Շուշան ցանեմ ես քեօ ոտին.  
Թեւեք կեղնին մէջիցդ դօտին  
Տէրտէ կօխնա մեր ներօտին :



## ՊԵՏՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Գարահիսար լերան կրճքին՝  
նա էլ ընկաւ վիրաւոր.  
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած,  
Զար թշնամու գնդակով :

Ժայռոտ լերան լերկ կատարից  
Վա՛ր սըլացիր, սեւ արծի՛ւ,  
Թեւերդ բաց, լայն թեւերդ,  
Ու ջիւանուն հո՛վ արա :

Խոցուած սրտից մեզ արիւնը  
Կաթիլ-կաթիլ կը ծորայ. . .  
Ա՛խ, ջիւանու կեանքն է հոսուծ  
Յաւոտ կըրճքի լայն վէրքից. . .

Ժայռոտ լերան լերկ կատարից  
Վա՛ր սըլացիր, սեւ արծիւ,  
Թեւերդ բաց, լայն թեւերդ  
Ու ջիւանուն հո՛վ արա. . .

## ԳՈՒՐԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Գըլգըլալով ջուր է իջնում  
Մ՛շու մշուշ սարերէն.  
Ծիծեռները ծի՛ւ—ծի՛ւ եկան  
Գարնան գալը երգելէն :

Գարուն չկայ Հայի համար,  
Ծաղիկ ծիծեռ մեզ պէտք չեն.  
Գերեզմանս հողին հաւասար,  
Թո՛ղ փուշ բուսնի իմ վրան. . .  
Գնա՛, ծիծեռ. . . Թո՛ղ ինձ մենակ,  
Վէրքը սրտիս՝ հողի տակ. . .

Բայց երբ տեսնես թշնամու գէմ,  
Հայ ժողովուրդ սարի պէս  
Զէնքը ձեռին հպարտ կանգնած,  
Հայե՛ր, լեռնե՛ր իրար պէս —

Ա՛խ, այն օրը արի՛, ծրւա՛,  
Գարնան գալը նոր կանչէ.—  
Հայո՛ց գարնան, որ բի՛ւր արեւ  
Սիրտս խորէն զօղանչէ. . .



# Ս Ի Ր Ե Ր Գ

Գնա՛, գնա՛, հետիդ եմ,  
 Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,  
 Սարինո՛, հա՛ր ջան,  
 Եա՛րինո՛, հա՛ր ջան,

Կարմիր խնձոր՝ զօտիդ եմ,  
 Հա՛, հա՛րինո, հա՛ր ջան,  
 Սա՛րինո՛, հա՛ր ջան :

Դու ինձ էստեղ չես թողնի,  
 Որտեղ երթաս մօտիդ եմ :

Ապարանը քարոտ ա,  
 Քարի տակըն արօտ ա,

Ուղիդ եօթը տարի ա,  
 Քոյրն աղբօրը կարօտ ա :


Եար եմ գլտել՝ նարի պէս,  
 Ընկուղենի ծառի պէս :

Ուր որ երթայ կայնել եմ,  
 Ին մեր սիրուն սարի պէս :

«Հայ Դեղջուկ երգեր»

Կ. Վ.

# ԴԱՐԴԸՍ ԼԱՅԷՔ



Դարդըս լացէ՛ք, սարի սըմբո՛ւլ,  
 Ալւան-ալւան ծաղիկներ,  
 Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբո՛ւլ,  
 Ամպշող երկնուց զով-հովեր :

Երկինք-գետինք զըլխուս մըլթնան,  
 Անտուն-անտէր կուլամ ես.  
 Եարիս տարա՛ն — ջանիս տարա՛ն,  
 Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես. . . :


Ա՛խ, եարս ինձի հանեց սըրտէն,  
 Անճար թողեց ու զընաց.  
 Սըրտիս սաւղէն, խորունկ եարէն  
 Անգեղ թողեց ու զընաց :

Դարդըս լացէ՛ք, սարի սըմբո՛ւլ,  
 Ալւան-ալւան ծաղիկներ,  
 Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբո՛ւլ,  
 Ամպշող երկնուց զով-հովեր :

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



## ՄԱՀ ՔԱՁՈՐԴԻՈՅՆ



Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ,  
Ե՛կ, մի՛ դողար, մօտեցիր հոս,  
Մնլաց աչով դիտէ զորդիդ  
Ու իւր վէրքերն արխնահոս :

Բըրդաց մայրեր թող լան, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ինչպէս երբեմն օրրանիս մէջ  
Կակուղ ձեռամբ փայփայելով,  
Մանկիկ մարմնոյս հանդիստ տայիր՝  
Իբրեւ հրեշտակ նւագեցով.

Զիս հանգչեցուր ի հող, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

« Նորեկ որդւոյս կենացն արեւ  
Ձեզի համար փայլի, Հայե՛ր », —  
Այսպէս յայնժամ դու երգէիր,  
Օրօրոցիս նըստեալ քովեր :

Անոնց համար շիջաւ, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս,  
Սակայն, մա՛յր իմ, նայէ չորսդին,  
Զարինուշտ սա քիւրտերըն տե՛ս,  
Հագարներով փոռած դետին,

Կերաւ դանոնք սուրն մեր, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ինչպէս վիշապ մրդնչելով,  
Ու մեր վրայ յարձակեցան,  
Յնցեց Զէյթուն՝ դուլն ժայռոտ,  
Իւր վհից մէջ թօթափեցան.

Կարմիր ներկաւ ձորք մեր, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Ու ծափ զարկին մեր հարց քստուերք,  
Զի չէ՛ մեռած Հայոցս կըրակ.  
Ու ցնծացին այնչափ զոհեր,  
Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ.

Խնդաց Մասիս, մա՛յր իմ, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :

Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,  
Հատուցանես զայն սիրուհւոյս,  
Վերջին անգամ գրկեմ մեր հող,  
Ուր արդ կ'իջնեմ ի ծոցն անլոյս :

Խաչ մը տնկէ վըրաս, ու դուն  
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն :  
Մ. ՊէՇԻԿԹԱՇԼԵԱՆ



# ՕՐՕՐ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Դուն նըստեր ես ճամբաներուն անկիւնը.  
Մագերդ ի վար իջեր կախուեր է ձիւնը.  
Մարմնոյդ վրայ կը փոսանան մութ խոցեր,  
Եւ աչուրներդ արիւնի լիճ են դարձեր :

Ո՞ր չար պարբիկը հիւսեց թեւը բաղդիդ. . .  
Ո՞վ տեսնելով քեզ տապալած ու վըտիտ՝  
Պիտէ յիշէ որ դուն երբեմն հօր  
Աղջիկն էիր սէզ աչքերով լուսաւոր :

Կը ծփային մագերդ ինչպէս դրօշ մը լայն  
Ազատ լերան մէջ՝ ուր հողիդ մեծածայն  
Կը մըռնչէր խոյանալով սարէ սար  
Ու ծոցդ հպարտ՝ մեղր ու կաթով կ'ուռնար :

Քեզ ցանկացին յեւրոպականք բոլոր,  
Պաշարեցին քեզ ոսոխներ ահաւոր.  
Երկա՛յն ատեն ոգորեցար կոռեցար,  
Մինչեւ՝ ա'լ խոնջ, ընկար գետին ուժասպառ :

Եւ քու հողիդ արգաւանդ էր ու բարի՝  
Կործանարար ուժերուն մէջ վիթխարի.  
Դուն կեանքի ծիւ մ'աւելցուցիր աշխարհին,  
Մատներդ հողէն գեղեցկութիւն հանեցին :

Դուն Անահիտն էիր խաղաղ աչքերով,  
Ոսկիամայրն էիր պայծառ լանջքերով.  
Ծոցէդ բարիք, նայուածքէդ լոյս կը տեղար,  
Շըրթերդ դաշն էին եւ ձե'ռքըդ ճարտար :

Եկան խուժերն ու ձեռքիդ կապ անցուցին,  
Բըզըքտեցին, աղարտեցին ծոցդ անդին.  
Եւ ըլլալսոց դարձար դուն Մա'յրը կարմիր,  
Գողգոթային ճամբուն վրայ ծընրադիր :

Ի՛նչ գեղեցիկ, ի՛նչ քաջ եղար ցաւին մէջ. . .  
Աղէտքին տակ հողիդ մ'նացեր էր անշէջ.  
Կարծըր լուծեր կտարտեցիր, ու մահէն  
Քանի՛ անգամ ոտքի ելար դու նորէն :

Աչքըդ լոյսին կը սեւեռէր անդադար.  
Միտքըդ խիղախ, նոր Աշխարհին կը դառնար.  
Ու դարերով յամառեցար առանձին,  
Թումը ձեւանալ Ասիական հեղեղին :

Մեծցաւ հեղեղն ու զգետնեց քեզ՝ մոլեղին,  
Ու մարեց բո'ցըդ թափովն իր ալիքին.  
Չըւառական, խաւարին մէջ՝ հողամած  
Միշտ կենդանի, դուն սպասեցիր գալարուած :

Գիշեր ատեն, մերթ հին շիրմաց խաչերը  
Կ'երերային, եւ Մասիսի քաջերը  
Մուրթին մէջէն կը շողային բարկաճայթ  
Աչուրներէն արձակելով շառ ճառազայթ :



Օգին մէջ խաւ կը թընդային թըմբուկներ.  
Դուն դող ելած, կ'առնէիր պահ մ'աչքըդ վեր,  
Ու վրդոված կը նայէիր լեռներուն.  
Ոչի'նչ, բայց մո'ւթը ծանր ու պա'ղ լոռիթին :

Օր մ'ալ ցաւի ցընցման մը մէջ անսահման՝  
Յընցուեցար՝ մեծ ճիշով մ'անձկոտ ընդվզման.  
Սշխարհ ձայնիդ խուլ մ'նայ, ու Բիրտ Ուժին  
Կոյր դարձապա'րը ճըզմեց ճիզդ քուկին :

Ժանտ հուրերու մէջ ճիւղներ ցատկեցին,  
Սիրտդ այրեցին եւ աչուրներդ փորեցին.  
Տունէն վանուած, հովերուն տակ մ'նացիր,  
Մերկ տարածուած, չորսիդ արին ու մոխիր :

Հիմա նստեր ես, ցաւագին ուրուական,  
Աւերներուն պատկերին մէջ տխրական.  
Կը խածկըռտէ վէրքերդ հովը սառուտ,  
Արին կ'իյնայ խեղճ ծիծերէդ կառ-կապուտ :

Դանդաղօրէն կը շարժես զլուխդ ու կուլաս,  
Ու ցած անուշ ձայնով օրօր կը կարդաս  
Չաւկըներուդ որ արինին մէջ ինկան  
Եւ անոնց՝ որ չաբս հովերուն ցրուեցան :

Օրօր կանաչ արեւներու, լուսաւէտ  
Աչուրներուն որ մարեցան առ յաւէտ.  
Եւ անոնց որ դեռ կ'ապրին ու կը տանջուին  
Զընտաններուն մէջ ու մռայլ աքսորին :

Հերի'ք, հերի'ք, այդ օրօրդ ո'ղբ է մահու.  
Հերի'ք, մենք նոր օրօր ունինք երգելու.  
Պիտի երգենք օրօրն յոյսին ու վրէժին,  
Ու մեռելները պիտի հողուն տակ սարսին :

Հերի'ք, հերի'ք . . . վեր առ զլուխդ ու մի' լար.  
Յաւը սուրբ է, ցաւը՝ մեծ ու փրկարար.  
Ոչինչ կայ վեհ քան խաչին տակ զոհն արի,  
Գիշերին մէջ կը հիւսուի ա'յգը բարի :

Շատ դահիճներն ու քանդողն'րը մըթին  
Փռչիլ պէս պիտի անցնին ու ցընդին.  
Ու մոխիրին մէջէն ելլես պիտի դուն  
Տառապանքէն նորոգուած ու շողշողուն :

Մի' լար, մի' թոյլ մազերդ հովուն տարաւորներ,  
Մի' լար, մի' խեղճ զլուխդ վար կործաներ  
Ճանչցիր դուն քեզ, ժողվէ՛ արինդ ցիրցան,  
Հերի'ք ուժերդ օտար տան սին կանգնեցան :

Հանդի'ստ տըժգոյն եղբայրներուն որ ինկան.  
Ելի'ր, օրհնէ՛ մեզ տարածէ մեր վրան  
Թեւերդ անհուն, թող մեր արինն ու հողին  
Քու արեւուդ մատաղ ըլլան ու ցամքին :

Մութին մէջէն պիտի ցըցուիս յաղթական.  
Սէքերըդ աստղեր պիտի դառնան ու ցոլան.  
Վէրքերդ վարդ պիտի ըլլան հոտաւէտ,  
Ու լոյս պիտի թափի ճերմակ մազերէդ :



Պիտի կանգնիս ճամբաներուն բերանը,  
 Պիտի քանդես Բըռնութեան սեւ խորանը.  
 Ոտքի՛ ելիր, ցաւերդ երկունք են հըսկայ.  
 Ո՛վ մայր, աշխարհ մը ծոցիդ մէջ կը խլըրտայ:

Ա. ԶՊԱՆԵԱՆ

### ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն, —  
 Իմ ծերացած մօր մօտ էր.  
 Փայլեց նշոյլ ուրախութեան,  
 Բայց ափսո՛ս որ երազ էր:  
     Կարկաչահոտ աղբիւրն այնտեղ  
     Թաւալում էր մարդարիտ.  
     Նա յստակ էր որպէս բիւրեղ,  
     Այն երազ էր ցնորամիտ:  
 Եւ մեղեդին տխուր, մայրենի,  
 Յիշեց մանկութեանս օրեր. —  
 Մօրս համբոյրն ես զգացի, —  
 Ա՛խ, ափսո՛ս որ երազ էր:  
     Կրճքին սեղմեց կարօտագին,  
     Աչքերս սրբեց — շատ թաց էր, —  
     Բայց արտասուքս գնում էին, —  
     Ա՛խ այդ ինչո՞ւ երազ էր:

Ա. ՇԱՀԱԶԻԶ

### ԾԻՐԱՆԻ

Ես մէկ ծառ եմ ծիրանի  
 Հին արմատ եմ անուանի,  
 Պըտուղներս քաղցրահամ,  
 Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արեւելեան,  
 Զունիմ որոշ այգեպան,  
 Տունկերս ամէն երկիր  
 Ընկած են բաժան-բաժան:

Տունկերըս ուր էլ գընան,  
 Թէպէտ նոյնը կը մնան,  
 Բայց օտար հողի վերայ  
 Զեն աճի, կը չորանան:

Արեւելքում ինձ անկեց,  
 Երբոր Աստուած ստեղծեց՝  
 Ասաց. «Աճէ՛, բազմացիր»,  
 Մի այգի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան  
 Հարաւից հըսկայ իշխան,  
 Այդ հսկայի անունով  
 Կոչուեցայ Ծառ Հայկական:



Ձորս հազար տարւայ ծառ եմ,  
Արմատըս պինդ՝ կայտառ եմ,  
Թէպէտ ոյժըս պակաս է,  
Բայց անունով պայծառ եմ:

«Երգեր»

ՋԻԻԱՆԻ

# ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարէն կուգայի՝  
Դուն դուռը բացիր,  
Ձեռքդ ծոցըդ տարար՝  
Ա՛խ արիր, լացիր:

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառւում եմ,  
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալւում եմ,  
Հալւում եմ, վառւում եմ:

Ես մի պինդ պաղ էի՝  
Դու մըռմուռ լացիր.  
Քո հրեղէն արցունքով  
Ինձի հալեցիր:

Ես մի չոր ծառ էի՝  
Դու գարնան արեւ,  
Քո սիրով ծաղկեցաւ  
Իմ ճիւղն ու տերեւ:

Թէ ինձ չէիր առնի՝  
Ինչո՞ւ սիրեցիր.  
Մի բուռ կըրակ եղար՝  
Սիրտըս էրեցիր:

«Հայ Գեղջուկ երգեր»

Կ. Վ.

# ՀԱՌԱՉԱՆՔ ԱՔՍՈՐԱԿԱՆԻ

Երբ ալեկոծ ծովին վրայ  
Իմ մակույկս խորտակուի,  
Ես փրփրաղէդ ալեաց մէջը  
Դեռ իմ յոյսըս չեմ կտրի:

Բոլոր ոյժովս եւ համարձակ  
Բազուկներս կը շարժեմ,  
Ալիքները պատառելով  
Դէպի ափունք կը թռչեմ:

Անհաւասար այս կռուի մէջ  
Թէ ուժերս ինձ թողնեն՝  
Ալիքները յորձանք տալով  
Դէպի անդունդ ինձ տանեն:

Այն ժամանակ զէթ ափովանք  
Ես դռնում եմ նրա մէջ, —  
Որ մեռնում եմ քաջի նրման,  
Կռիւ տալով մինչեւ վերջ:



Ես Կուկունեան Սարգիս անուն՝  
Աքսորման մէջ ինկած եմ,  
Ազատութեան սիրոյն համար  
Կեանքս ու հոգիս զոհած եմ:

Ձեռքերս շղթայ, ստքերս շղթայ,  
Մուկ բանտին մէջ ինկած եմ,  
Հայրենիքիս սիրոյն համար  
Կեանքս ու հոգիս զոհած եմ:

Գերեզմանիս քարին վրայ  
Մէքըդ սիրով դու երգիր,  
Եւ փոխանակ իմ երեսին՝  
Շիրմիս քարին համբուրիր:

Մընա՛ք բարեաւ, սուր, հրացան,  
Մընա՛ք բարեաւ, ընկերներ,  
Անցան օրերս ազատութեան,  
Եկան բանտի շղթաներ:

Գերեզմանիս չորս բոլորը,  
Վարդ, մանիշակ թո՛ղ բուսնին,  
Իմ հայրենեաց խեղճ զաւակունք  
Այս վարդերով զբօսնին:

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

### Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Երբոր բացուին դռներն յուսոյ  
Եւ մեր երկրէն փախ տայ ձըմեռ,  
Ձըքնաղ երկիրն մեր Արմենիոյ  
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,  
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,  
Երբոր ծառերն հազնին տերեւ՝

Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,

Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Սուրիոյ,  
Լեռոն Լիբանան եւ իւր մայրեր.

Տեսի զերկիրն Իտալիոյ,  
Վենետիկ եւ իր կոնտոյներ.

Կըղզի նման Հիք մեր Կիպրեայ,  
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ՝

Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,

Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,  
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.  
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝  
Յիշատակաց իւր կարօտի.

Յորժամ քնարն իմ ցրտանայ,  
Սիրոյն տալով վերջին բարեւ՝

Երթամ ննջել յիմ Կիլիկիա,

Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:



## ՏՈՒՆ ԱՐԻ

Երթիկ, երթիկ բոնեւ հս,  
Երթկայ տակին կոնեւ հս.

Տուն արի, տուն արի, տուն արի, եա'ր,  
Մ'թնել ա, տուն արի, անջիգեար եա'ր,  
Կանչում եմ, եար, արի, եարալու եա'ր :

Ձէն տուի՝ ձէնըս չառար,  
Մ'ագեամ ինձէն ջորե՞լ ես :

Ձուն դնեմ թաւէն խաշեմ,  
Ելնեմ երթիկը աշեմ,  
Տեսնեմ եարս գալիս ա,  
Ձոքեմ չաքմէքը քաշեմ :

Հանդէս գաս գեղը մտնես,  
Իմ քցած տեղը մտնես,  
Ընձէն գիւման եար բոնես,  
Բեմուրադ հողը մտնես :

Ծառնե'ր, դուք ծիրան միք տայ,  
Ճղնե'ր, դուք էլ բար միք տայ,  
Ես դարիւր եմ, զոնալս եմ,  
Դարդերս իրար միք տայ :

## ՊԱՐԵՐԳ ԹՌՆՈՅԻ

Ձա'ր՝ զը'նգը, զա'ր՝ զը'նգը, թո'ղ զը'նգա,  
Պարենք գիշեր լուսընկայ :

Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,  
Ձա'ր՝ զը'նգը, զա'ր՝ զը'նգը, թո'ղ զը'նգա,

Ձիւնն եկեր՝ գետին նաշխեր :  
Պարենք գիշեր լուսընկայ :

Էլի պարը բոլորաւ,  
Ձա'ր՝ զը'նգը, զա'ր՝ զը'նգը, թո'ղ զը'նգա,

Եարըս միջին մոլորաւ :  
Պարենք գիշեր լուսընկայ :

«Ձեռաց Տետրակ»

կ. վ.

\*\*\*\*\*

## ՁՈՒՄՐԹ ՆԱԽԱՍՏԻՆ

Ձըւարթ նաւաստին  
Ծովերուն վերայ,  
Հովին հոսանքին  
Դիմազրաւ կ'երթայ :



Ձերթ ծովու թըռչուն  
 Միշտ ծայրը կայմին,  
 Իր երգը հընչուն  
 Կը յանձնէ հովին :

Կ'անցնի վըտանդէն  
 Աշխոյժ եւ ուրախ,  
 Ու չազդեր իրեն  
 Մըրրիկն անդամ վախ :

Սեւ ամառն ալ վերէն  
 Երբ իջնէ գըլխուդ՝  
 Կը կրկնէ նորէն  
 Իր երգը հընչուն :

Տիկ. Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ



## ԷՍ ԳԻՇԵՐ

Էս գիշեր, լուսնակ գիշեր,  
 Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,  
 լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,

Ձիւնն եկեր, դեռին նաշխեր,  
 Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.  
 Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.

Աչքըդ գէ՛մ արա՛ պաշեմ,  
 Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,  
 լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,


Կեռ ունքեր, կարմիր թըշեր :  
 Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,  
 Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ :

Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,  
 Հացըս թող լինի դարի,  
 Մենակ եարըս ինձ համար  
 Սրտով խօսքը կատարի :

Ա՛ղջի, քու չարը տանեմ,  
 Քու սիրուդ ինձ կը սպանեմ.  
 Դու իմ խօսքին ահանջ գիր,  
 Ես մօրը հաւան կանեմ :



ԻՂՁ ՊԱՆԴՈՒԽՏԻ



Թէ թեւ ունէի,

Ո՛հ, կը թռչէի

Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին.

Անկէ ձեզ Հայեր,

Կարդայի հրաւէր,

Թ'եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,

Սիրեմք ընկեր զընկեր՝ սիրեմք կաթողին :

Թէ դեռ յիմ արին

Ձի խառնուէր թոյն,

Դեռ երակացըս մէջ աշխոյժ խաղային,

Ո՛հ, քանի՛ հըպարտ

Կանչէի ազատ,

Թ'եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,

եւայլն:

Թէ կեանք ունէի,

Ո՛հ կը լարէի

Թեւ քընարի բախտին Հայոց անկենդան,

Որ նա ձեզ խօսէր,

Ձեզ, պանդուխտ Հայեր,

Թ'եկէ՛ք, Հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,

եւայլն:

Թէ սէր ըլլայի,

Կամ անմաշ հողի,

Կապէի Հայոց սըրտեր անմեկին,

Յայնժամ եւ նորա

Մի որդիք Հայկայ

Կ'ըլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մարմին,

Սիրեմք ընկեր զընկեր, սիրեմք կաթողին :

Ս.Յ. ՖԻԼԻԿԵԱՆ



### Եկ ԻՄ ՍՐԻՆՊ

Ե՛կ իմ սրինդ, իմ բարեկամ սրբապետ,  
Նիհար շրթներդ, ո՛հ, երեբուն,  
Դի՛ր դալկահար իմ շրթներուն,  
Երգենք ու լանք, լանք ու երգենք տը բտմազին :

Լա՛ց, զի լոկ քեզ զբախ հատորն իմ սրտին.  
Դու բարունակ էիր կանաչ,  
Երբ մի անգութ ձեռք անճանաչ  
Կտրեց ըզքեզ, անջատեց մայրն ու որդին,

Եւ թոյլ տըւիր որ լանջիդ վրայ դալարուտ  
Ծակեր բացուին, վէրք երկաթի.  
Թող այդ վիրաց, ըսիր կաթի  
Արիւն, բողոք, միակ ըստիս վիշտերուդ :

Ես ալ մանուկ էի անմեղ երբ վաղուց՝  
Մի անձանօթ պատճառ վըզիս  
Լուծ մը զըրաւ, ո՛րը կոչեց զիս՝  
Եւ հօր ու մօր սիրոյն կարօտ զիս թողուց :

Իմ ալ կուրծքս ծակծղկեցին ժանտ վէրքեր,  
Եւ որպէս դուն սիրես որմին  
Յենուլ, լոկ, մինչեւ որ մին  
Ձի յուզէ քեզ, չե՛ս հառաչեր, չես երգեր,

Լըռիկ մ'նջիկ սիրեմ եւ ես հեռու կալ  
Ընկերութեան ժիտ ժըխորէն.  
Եւ իմ սըրտին, հոգւոյն խորէն  
Ձըննել, զգալ լոկ, զարմանալ ու խոկալ :

Եւ քանի որ նոյնն է ծընունդ մեր եւ կեանք,  
— Մարդուն քրմաց դուն հըպատակ,  
Եւ անձանօթ մի նըպատակ  
Անհուն կամաց մը մէջ թողած է իմ կեանք,—

Ինչո՞ւ նոյն հոգն չամփոփէ մեզ, ի՛մ սըրինդ,  
Ձէ՞ որ սիրող սըրտից կըրկին  
Նո՛յնն են զըծոխք եւ նոյն՝ երկին,  
Յիշէ՛, ընդ քեզ ապրիլ, մեռնիլ ուխտ ըրինք :


Թող երգէնն, դաշնակ, քընար գեղգեղեն,  
Յեկեղեցւոյ, ի զինեաան,  
Աղօթք ու պար թըռչին, խայտան.  
Թող այլք վայլեն հաճոյք մարմնոյ, հոգեղէն.

Ա՛խ, իմ սըրինդ, աշխարհ յոյսով թող բերկրի,  
Թող բաղդն անոր ժըպտի յոյսին,  
Ե՛կ, ես եւ դու ի միատին  
Լա՛նք ու երգե՛նք, մեր բաժինն այս է յերկրի :

Գ. ՊԷՇԿԷՐԹԻԻՐԵԱՆ



## ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ



Թէ իմ ալեւոր հերքս սեւնային,  
Ոյժս ինձ յետ դար, կտրիճ դառնայի,  
Նըժոյզ ձի նստած, բեխերս ուրած,  
Ձեռքս թուր առած ես դաշտ կ'երթայի :

Ես դաշտ կ'երթայի, դաշտ Աւարայրի,  
Ողորդած ցօղած Հայոց արիւնով :  
Ազգ իմ սիրական, դու ազգ թորդոմեան,  
Քու կորցրած թաղը քեզ յետ կուտայի,

Կ'ասէի Հայոց օրիորդներին,  
Ծախեցէ՛ք հազի ձեր թանգ շորերը,  
Թողէ՛ք պաճուճանք, դարդ, մարդարիտներ,  
Ժանդոտած ու դուռ են մեր թըրերը :

Տուէ՛ք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,  
Որ մենք փաթաթենք մեր մարմնու վէրքը,  
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մազերից,  
Այսպէս յայտնեցէ՛ք դուք մեզ ձեր սէրը :

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,  
Սընտուկներս լի ոսկով, արծաթով.  
Շատերի նըման ես չէի լինիլ  
Երբեք ազգասէր ունայն խօսքերով :


Շամպանեա, գինու, ալմաս խաչին տեղ,  
Կ'առնուի առատ գնդակ ու վառօղ,  
Արձակ համարձակ կ'երթայի հանդէպ  
Հայատեաց ազգին անթիւ զօրքերով :

Թէ ես լինէի մի երկրի իշխան՝  
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման,  
Շուտաքայլ երթալ գէպ ի Հայաստան,  
Խեղճուկ հայ ազգին լինել օգնական :

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ,  
Աստուած լինէի մեր հողազընդին,  
Ի՛նչ սուր սըլաքներ պիտի շող տայի,  
Մեր արիւնարբու թշնամեաց զընդին :

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

## ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐՔ



Թէ հայրենեաց պսակադիր  
Գողթնի քնարք լուր են,  
Երկնից թող դան անմահ հոգիք,  
Հայոց քաջեր պսակել :



Մասեաց զազալթն թող գան բազմին,  
Երկնից զունդ զունդ հրեշտակներ,  
Աստուած իջեր ի Հայաստան,  
Հայոց արիւնն հոտոտել :

Փախէք ամպեր Շաւարշանէն,  
Ալ մի ցօղէք ձեր ցօղեր,  
Շաւարշանը սոսկում է.  
Հայոց քաջաց արիւն է :

Եւ կը ծլին եւ կը ծնին  
Այս գաշտին մէջ ոչ խոտ վարդ.  
Այլ վարդանայ ինկած երկիր  
Պիտի ծաղկի սուրբ հաւատ :

Քանդակագործ քաջ Եղիշէն  
Գրիչ ի ձեռն զայ յԱրտազ,  
Չափէ, ձեւէ, գրէ, գրոջմէ  
Կեանք, մահ, հաւատք վարդանայ :

Ո՛հ վարդանայ անուան արժան  
Մասիս կանգնի մահարձան,  
Մենաստաններ խաչն ի գմբէթ,  
Աւետարան սուրբ հաւատ :

Ծագէ արեւ քոյդ ճառագայթ,  
Խաղտեաց լեռնէն, մութ խորշէն,  
Այնտեղ ինկաւ քաջ Հմայեակ,  
Այնտեղ պառկեր նահատակ :

Լուսին, լուսին, աչօքդ անքուն,  
Պահէ Հայոց ոսկորներ,  
Եւ մայիսի զուարթ ցօղով  
Ցօղէ անոնց շիրիմներ :

Արծուիք, բազէք Հայաստանի,  
Եւ արագիլ ամբան հիւր,  
Դուք հակեցէք այս աշխարհին,  
Ժառանգեցէք Հայոց տուն :

Մոխիրներու վրայ նստէք,  
Աւերակներ շինէք բուն,  
Եւ ծիծեռնակ զայ ու երթայ,  
Մինչեւ Հայոց զայ գարուն :

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ



## Ի ՁԵՆ ՀԱՅԵՐ



Ի դէ՛ն, Հայեր, ի սուր եւ ի հրացան,  
Մայր-Հայաստանից կոչում է մի ձայն,  
Լեռից լեռ թընդում է ահեղ հըրաման,  
Թըռէ՛ք, Հայեր, թըռէ՛ք դէպի Հայաստան,  
(Դէպի, դէպի, դէպի Հայաստան,  
Թըռէք, Հայեր, դէպի Հայաստան):

Արեւելք եւ արեւմուտք, հարաւ եւ հիւսիս  
Դղրղաց ու թընդաց քաղցըր աւետիս.  
Հայկայ քաջ գաւակաց առիւծ կըրծքերից  
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից.  
(Ամէն, ամէն, ամէն կողմերից.  
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից):

Փըրկութեան աւետիք առած ի բերան՝  
Խումբ խումբ Հայեր դէպ Մայրըն-Հայաստան  
Դիմում են ցընծութեամբ իբրեւ հարսանիք,  
Ուխտած՝ սուրբ արիւնով փըրկել հայրենիք:  
(Իբրեւ, իբրեւ, իբրեւ հայրենիք,  
Ուխտած՝ սուրբ արիւնով փըրկել հայրենիք):

Մայր-Հայաստանը ոտքի է կանգնում,  
Առիւծաբոց վրէժ, վըրէժ է զոռում.  
Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը,  
Արիւնով ներկուած եւ բոլոր գետերը:

(Բոլոր, բոլոր, բոլոր դաշտերը,  
Արիւնով ներկուած եւ բոլոր գետերը):

Թըշնամին զարհուրած փախուտ է դիմում,  
Անթիւ աւար ու գանձ իր յետին թողնում.  
«Յաղթութի՛ւն, յաղթութի՛ւն» զոչենք միաձայն.  
Թըշնամին պարտուած է, կեցցէ՛ Հայաստան:  
(Կեցցէ, կեցցէ, կեցցէ Հայաստան,  
Թըշնամին պարտուած է, կեցցէ՛ Հայաստան):

— 0 —

## ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՔ

\*\*\*\*\*

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ՝  
Թէ երգը թոչին սիրողաբար,  
Մատուց կուտին ամենազեղ,  
Թէ որ զարնեն փափուկ քնար,



Ձուներն ձայն մի այնքան սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Տո՛ւր ինձ քու ձեռք, եղբայր հմբ մենք,  
Որ մըրըրկաւ էինք գատուած,  
Բաղդին ամէն ոխ չար ու նենդ,  
Ի մի համբոյր ցըրուին ի բաց :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Երբ ալեւոր Մայր Հայաստան  
Տեսնէ զսրդիս իւր քովէ քով,  
Սըրտին խորունկ վէրքըն դաժան  
Քաղցը արտասուեաց բուժին ցօղով :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ լացինք մենք ի հընում,  
Եկէք, դարձեալ յար անբաժան,  
Խառնենք դարսօսք եւ ըղինդում,  
Որ բաղմածնունդ ըլլայ մեր ջան :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մէկտեղ յողներք, մէկտեղ ցանենք,  
Մէկտեղ թափին մեր քըրտինքներ,  
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,  
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր :

Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,  
Քան զանձկալի եղբայր անուն :

Մ. ՊԵՏԻԿԹԱՇԼԵԱՆ

\*\*\*\*\*

## ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,  
Թնդացնում ես երկինք գետին տենչափառ,  
Քաջ անունդ պիտի յիշուի դարէ դար.  
Չըսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանի՛կ :

Թըշնամիներ երբ լսեն քո անունը,  
Օձերի պէս պիտ սողան իրենց բոյնը.  
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը  
Չը ցամաքէ՛ մինչ յաւիտեան, Անդրանի՛կ :

Հայոց կուսանք դափնեայ պըսակ թող հիւսեն,  
Քնքոյ՜ ձեռամբ քո ճակատը պըսակեն,



Գոհարներով անվախ կուրծքդ դարդարեն,  
Կեցցե՛ս յաւէտ դու անսասան, Անդրանի՛կ :

Հայաստանի սոխակները քեզ համար  
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.  
Անյաղթ մընաս, դու քաջ կռուի սիրահար,  
Հայրենիքի աէր ու պաշտպան, Անդրանի՛կ :

Վ Ա Ր Դ Ա Ն

Իմ Հայրենեաց հոգի Վարդան,  
Հոգիս հողւոյդ եղնի զուրպան,  
Որ Տըզմուտի ափերի քով,  
Վաթսուն հազար կտրիճներով,  
Զարկիր, դարկուար, ինկար քաջ-քաջ,  
Պարսիկ սփռած ի ձախդ ու յաջ :

Իմ հայրենեաց արեւ Վարդան,  
Արեւս ար՛ւուդ եղնի զուրպան :

Աւետարան ու խաչն առեր,  
Տարիւր յերկինս բարձրացուցեր,  
Եւ գուն ալ հեա թողիր գացիր,  
Անուշ արեւդ հողին տըւիր,

Որ հայրենեաց շողայ արեւ  
Շաւարշանայ դաշտին վերեւ :

Իմ հայրենեաց արեւ, Վարդա՛ն,  
Արեւս ար՛ւուդ եղնի զուրպան :

Արինդ կարմիր կարմիր թափուաւ  
Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ.  
Լուսնակն ելաւ ամպի տակից,  
Պաղ պաղ թափեց ցօղիկն յաչից,  
Որ հայրենեաց վարդեր բացուին,  
Պլպուլն երգէ դրախտի սարին :

Իմ հայրենեաց արեւ, Վարդա՛ն,  
Արեւս ար՛ւուդ եղնի զուրպան :

Ս. Ն. ՖԷԼԷԿԵԱՆ

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Իմ հայրենիք զիս կը կանչէ,  
Հեռու եմ Հայաստանէն.  
Հայու որդւոյն կը վայելէ՞  
Հեռանալ Հայաստանէն :

Միթէ արծաթ, ոսկի, գոհար,  
Կը սփռի՞նք Հայաստանը,



Այն որ կ'ողբայ որդւոցն համար,  
Խըղճալի Հայաստանը :

Խոր տխրութեան մէջ է թաղուեր,  
Թագունի Հայաստանը.  
Բողբիկ ոտքով, արձակ մագով  
Կ'արտասուէ Հայաստանը :

Անգութ երկինք ալ չը յիշեր.  
Մոռցեր է Հայաստանը,  
Անսիրտ Հայերն ալ չեն սիրեր  
Անուշիկ Հայաստանը :

Ո՛հ թողէք զիս խօսիմ ազատ,  
Երգեմ միշտ Հայաստանը,  
Անոյշ երկիր, կոյս անարատ,  
Աննճման Հայաստանը :

Արեւ ծածկեր է իւր դէմքը,  
Խաւար է Հայաստանը.  
Հայոց արեւն ալ մարեր է,  
Սեւ հագեր Հայաստանը :

Թըշուառ սըրտիս ձայն կը կարէ,  
Ողբալով Հայաստանը,  
Ո՛հ, չըկայ Հայ որ ըսիտիէ.  
Նուաղեալ Հայաստանը :

Թէեւ կըտրի իմ վերջին շունչս,  
Պիտի պօռամ Հայաստան,  
Պըլլում մէյ մ'իմ հայրենեացս.  
Հապա մըտնեմ գերեզման :

Անդորրութիւն ես կը խնդրեմ,  
Սիրելի Հայաստանին.  
Կըտրել այս ձայնս չէ', չէ' կարող,  
Սոսկումըն գերեզմանին :



## ՍՈՒԳ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Իմ սիրելի զաւակունքս  
Կը թափառին օտար յաշխարհ,  
Ես ո՞ւր գիմեմ, ո՞ւր փնտռեմ,  
Կը ծառայեն այլոց խոնարհ :

Եկա՛յք, որդեակք իմ,  
Ձեր մօրն այցելութեան :

Դարեր անցան լուր մը Հառի,  
Իմ քաջերս մեռան կորան,



Կուլամ, արիւնըս կը սառի...  
Մ'էկը չունիմ տայ ինձ դարման :

Եկա'յք, որդեակք, եւն.:

Արիւնս ցամքած, սիրտըս մաշած,  
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան,  
Եւ կարօտոյն իմ որդեկաց  
Պիտի իջնեմ սեւ գերեզման :

Եկա'յք, որդեակք, եւն.:

Եւ դու հովիւ թափառական,  
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց,  
Ե'կ, արաատւենք թանգ կորըստեան,  
Տըխուր մահուան մեր որդեկաց :


Եկա'յք, որդեակք, եւն.:

Իսկ դո'ւ կըռռնկ իմ հայրենեաց,  
Դընա' հեռու աչքէս ի րաց...  
Յետին ողջոյնս տար դաւաւացս,  
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած :

Եկա'յք, որդեակք, եւն.:

\*\*\*\*\*

## Ի՞նչ Կ'ԸՍԵՆ



Ինծի կ'ըսեն,— «Ինչո՞ւ լուռ ես».  
Ո՛հ, միթէ բառ կամ խօսք ունի՞  
Արշալոյսը որ կը բռնկի,  
Զի անհուն է այն ալ ինձ պէտ :

Ինծի կ'ըսեն,— «Միշտ տխուր ես».  
Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ  
Թօթափեցան զլիւռս աստղիկք,  
Արշալոյս մը չանցաւ սրտէս :

Ինծի կ'ըսեն,— «Կըրակոտ չես,  
Լըճակի մը պէս ես մեռած,  
Դալիահար՝ դէմքդ ու հայեցուած»:  
Ո՛հ, յատակն ես իմ փրփուրներ :

Ես ինձ կ'ըսեմ. ժամդ է հասեր,  
Քու երկրորդ սեւ մօրդ զընա՛ դող,  
Դերեզման՝ հոն գտնես դու հող,  
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստղեր :

Պ. ԴՈՒՐԵԱՆ



Լ Ճ Ա Կ



Ինչո՞ւ ապշած ես, լըճա՛կ,  
Ու չե՞ն խայտար քու ալեակք,  
Միթէ հայլույդ մէջ անձկաւ  
Գեղուհի՞ մը նայեցաւ,

Եւ կամ միթէ կը դմայլի՞ն  
Այեակդ երկնի կապոյտին,  
Եւ այն ամպոց լուսափթիթ՝  
Որք նըմանին փրփուրիդ :

Մեղամաղձոտ լըճա՛կ իմ,  
Քեզ հետ ըլլանք մըտերիմ,  
Սիրեմ քեզի պէս ես ալ  
Գրաւիլ, լըռեւ ու խոկալ :

Ո՛րքան ունիս դու ալի՛  
Ճակատս ա՛յնքան խոկ ունի,  
Ո՛րքան ունիս դու փրփուր՝  
Սիրտս ա՛յնքան խոց ունի բիւր :

Այլ եթէ դողդ ալ թափին  
Բոյլքն աստեղաց երկնքին,  
Նըմանիլ չես կրնար դուն  
Հողույս՝ որ է բո՛ց անհուն :

Հող աստղերը չեն մեռնիր,  
Ծաղիկներն հող չեն թոռնիր,  
Ամպերը չեն թրջիր հող,  
Երբ խաղաղ էք դուք եւ ող :

Լըճա՛կ, դու ես թագուհիս,  
Զի թ՛հովէ մ՛ալ խորշումիս,  
Դարձեալ խորքիդ մէջ խրոտիլ  
Զիս կը պահես դողդղալով :

Շատերը զիս մերժեցին,  
«Քընար մ՛ունի սոսկ» ըսին.  
Մին՝ «դողդոջ է, գոյն չունի —  
Միւսն ըսաւ — կը մեռնի՛» :

Ո՛չ ոք ըսաւ — «հէ՛ք տըղայ,  
Արդեօք ինչո՞ւ կը մըլխայ,  
Թերեւս ըլլայ գեղանի  
Թէ որ սիրեմ, չը մեռնի» :

Ո՛չ ոք ըսաւ — «սա տըղին  
Պատռենք սիրտը տըրամաղին,  
Նայինք ինչե՛ր գըրուած կան...»  
— Հոն հրդեհ կայ, ո՛չ մատեան :



Հոն կայ մոխի՛ր... յիշատակ...  
 Ալեակքդ յուզի՛ն թող, լըճակ,  
 Ձի քու խորքիդ մէջ անձկաւ  
 Յուսահատ մը նայեցաւ... :

Պ. ԳՈՒՐԵԱՆ

### ԼԵՓՕ ԼԵ ԼԵ

\*\*\*\*\*

Լէփօ Լէ Լէ, Լէփօ Լէ Լէ, Լէփօ Լէ Լէ, հօտալի  
 Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ  
 Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ  
 Գիւզէլ շիրին, հարալլը ջան հարալլէ :  
 Գիւզէլ շիրին, հարալլը ջան հարալլէ :

Հօլէյ, հօլէյ, հօլէյլէ,  
 Հայրըս տունը թող ճգնի,  
 Մայրըս տունը թող չեղնի,  
 Դէ տղերք եկէք թող հանենք,  
 Չար թշնամու աչքը տանենք :

\*\*\*\*\*

### ԼԵՊ ՀՕ՝ ԼԵ ԼԵ

Լէ'պ, հօ', Լէ', Լէ', Լէ'պ, հօ', Լէ', Լէ',  
 Լէպհօ', Լէպհօ', Լէ'պհօ, Լէ.

Ձեր տան տակին վար կանիմ,  
 Չար Գրդերին քար կանիմ,  
 Ով իմ սիրած ինծի տայ,  
 Գիժութիւնս թարկ կանիմ :  
 Էն սարը բանձըր սար ա,  
 Տակը զընճըլած քար ա,  
 Ես քեզ էն տեղ սիրեցի,  
 Էդ ո՞վ արաւ աշկարա :  
 Եաղի դուզը սառել ա,  
 Աչքիս լուսը մարել ա,  
 Վա'յ էն շըմշատ աչքերին,  
 Ուշքըս միտքըս տարել ա :

\*\*\*\*\*

### ՄԻՐՈՅ ԶՈՀԵՐ

Լըճի մէջ նաւակը  
 Մեղմ հողմիկ կը տանի  
 Նորա մէջ նստած է  
 Սիրահար պատանի :



Պատանին ձեռքն ունի  
Կիթարա ու կ'երգէ.  
Իսկ քամին կը փախցնու  
Նաւակը եղերքէ :

Լըճակի մէջը կայ  
Քարաշէն մի ամրոց,  
Սիրունայ բնակարան՝  
Հանապազ փակ ու զոց :

Պատանւոյ նաւակը  
Դէպ ամրոց կը վաղէր,  
Ուր նորա անձկալին  
Սրտատրոփ կը սպասէր :

Մեղմ հովը աւելի՝  
Աւելի սաստկացաւ,  
Երկինքը թուխտ պատեց  
Փոթորիկ բարձրացաւ :

Սլիքի լեռները  
Դռուլով կը ծփան,  
Պատանին աներկիւղ  
Կը նուազէ կիթարան :

Լուսինը ամպերի  
Տակերէն երեւցաւ,  
Սոսկալի աղէտի  
Պատկերը բացուեցաւ :

Կէս ճամբան ալիքը  
Նաւակին խփուեցան,  
Նաւակը փշրեցին,  
Յոյս չկայ փրկութեան :

Պատանին աչքերը  
Լուսնեակին բարձրացուց,  
Կիթարի լարերը  
Նա ուժգին հնչեցուց :

«Տար վերջին խօսքերս  
Անձկալույս, ո՛վ լուսին,  
Թէ՛ քաղցրիկ անունդ  
Յիշելով կը մեռնիմ» :

Դադրեցաւ փոթորիկ,  
Ու ալիք պտուկեցան.  
Ջրրի վրայ կոտրտանք  
Նաւակի երեւցան :



Սիրունին արտատրոփ՝  
Նայեցաւ լճակին,  
Հասկացաւ դառնութիւն  
Իւր անբախտ վիճակին :

«Իրարմէ բաժնեցին  
Մեզ աշխարհ եւ այս կեանք,  
Գէ' թ մահով այսուհետ  
Ջրբի տակ միանանք» :

Ասաց՝ եւ աղաղակ  
Բարձրացուց նա ուժգին,  
Գլորուեց, զո՛հ եղաւ  
Անկուշտում ծովակին :

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

\*\*\*\*\*

## Խ Ա Ն Ի Ե Ր Գ Ը

Լուսին չկար, մութ գիշեր էր,  
Մի խումբ կ'երթար արագ արագ,  
Տեսանք որ քաջ խանի խումբն էր,  
Զինուած էին բոլոր նրանք :

Կեանքերը ազդին նուիրած,  
Կտրիճ խանն առաջ ինկած՝  
Գնում էին Բըրդաց սահման,  
Թըռչում էին որպէս կրակ :

Հրացանները ուսերին՝  
Դրօշակը պարզել էին,  
Գնում էին ուրախ զուարթ,  
Ազատութիւն երզում էին :

Մութ անտառից անցնում էին,  
Ամէն մէկը առիւժ էին,  
Նժոյզ ձիանց վրայ նստած,  
Մերկ սըրերը քաշել էին :

Երբ քաջ խանը ելաւ Բառն,  
Թնդանօթներ արձակեցին,  
Հայ քաջերի մօսիններից  
Գնդակները զոռոռացին :


Ահեղ կռիւն անա սկսեց,  
Երկու անհղ թշնամեաց մէջ.  
Բիւրտ զօրքերին դիմադրեցին,  
Փառաց պսակ վաստակեցին :



Երբ քաջ խանը հրահանդ կուտար,  
— Արի՛ք առիւծներ իմ քաջ.  
Մտան թշնամու խիտ շարքեր,  
Կոտորեցին ձախն ու աջ :

Կեցցէ՛ խանը իւր խմբովը,  
Սարսափ թողեց Բասենումը,  
Երեք օր ու գիշեր կռուեց,  
Աչքերիցը քունը կտրեց :

Հայաստանի հողի վրայ,  
Քաջը թափեց իւր արիւնը,  
Յիշենք Հայեր, չի մոռանանք,  
Կտրիճ խանի քաջ անունը :



### ՍԻՐԱՀԱՐՆԵՐ ԼՈՒՄՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

Լուսնակ գիշերը բոլորովին քունն չունիմ.  
Ինձ տեսնողը կարծում է թէ տունն չունիմ :  
Ննջարանս սենեակիդ պատի տակն է.  
Կեանք խնդուլթիւն պարզ գիշերուայ  
լուսնակն է :

Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ կամար  
ունքերուդ.

Արտասուքը վնաս կուտայ աչերուդ :  
Արի՛ գնանք խորհուրդ անենք միասին.  
Ամուսնանանք ալ չըսպասենք մեծ պատին :

\*\*\*\*\*

### ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Լոեց — Ամպերը եկան ծածկեցին  
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին.  
Մնացի մինակ, հողիս վրդոված,  
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած :

Եւ այնուհետեւ ամէն իրիկուն,  
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.  
Նրա տխրամած դէմքը նայելիս,  
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս :

Ա՛խ, ցոլա՛, փայլէ՛, տխրադէմ լուսին,  
Գուցէ քո փայլից փայլ տաս եւ Հային :

Պատմէ շատերուն Վարդանի մահը,  
Կամ ի՛նչպէ՞ս կորաւ հայ խզգի դահը,  
Կամ ի՛նչ վեհ սիրով սիրում էր Վարդան  
Մայրենի հողը, — աշխարհ Հայաստան :

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ



ԽԱԽԱՐԵԼ ԵՄ ԻՆՉՊԷՍ ԳԻՇԵՐ

Խաւարել եմ ինչպէս զիշեր,  
Իմ չորս կողմս է փոթորիկ.  
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,  
Ես սիրում եմ հայրենիք :

Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,  
Որդեկորոյս ծնողներ,  
Եղբայրագուրկ անթիւ քոյրեր  
Թափում են յորդ արցունքներ :

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,  
Ես շատ ու շատ փոխուել եմ.  
Ա՛ռ թաշկինակդ աշերդ սրբիր,  
Ես քեզ սիրել կարող չեմ :

Մնա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,  
Սէրդ լինի ինձ խրախոյս,  
Արդ արտասուք ես պիտ՝ թափեմ  
Որ իմ ցաւերս սփոփեմ :

Ա՛խ տուէք ինձ մի քաղցր քուն,  
Կեանքից հեռու սըլանամ՝  
Այն աշխարհը ուր խնդուի ին  
Ու սէրն է միշտ անթառամ :

ԾԻԾԵՌՆԱԿ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,  
Դու, դարնան սիրուն թրռչնակ,  
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,  
Թրռչում ես այդպէս արագ :

Ա՛խ, թրռի՛ր, ծիծեռնա՛կ,  
Ծընած տեղս — Սշտարակ.  
Անդ շինիր քո բոյնը —  
Հայրենի կըտուրի տակ :

Անդ հեռու՛ ալեւոր  
Հայր մը ունիմ սգաւոր.  
Որ միակ իւր որդւոյն  
Սպասում է օրէ օր :

Երբ տեսնես դու նորա՛  
Ինձնից շատ բարեւ արա՛.  
Ասա՛, թող նստի լայ  
Իր անբախտ որդւոյն վրայ :

Դու պատմէ՛, թէ ինչպէս  
Աստ անտէր ու խեղճ եմ ես,  
Միշտ լալով, ողբալով՝  
Կեանքս մաշուել, եղել է կէս :



Ինձ համար ցերեկը  
Մութ է շըրջում արեգը,  
Գիշերը թաց աչքիս  
Քունը մօտս է գալիս :

Շուտով սառ հողի տակ  
Կը պառկեմ՝ այստեղ մենակ,  
Թողնելով հօրս սրտում  
Միշտ ցաւալի յիշատակ :

Դէ՛հ, սիրուն ծիծեռնա՛կ,  
Հեռացի՛ր, գնա՛ արագ,  
Դէ՛պ՝ Հայոց աշխարհը,  
Ծընած տեղս — Աշտարակ :

### ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ԿՌՈՒՆԿ

Կոռնիկ, ուստի՞ կուզաս, ծտոյ կմ ձայնիդ,  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս.  
Մի՛ վազեր, երամիդ շուտով կը հասնիս,  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Թողեր եմ եկեր միւլքս ու այգիս,  
Քանի որ ա՛խ կանեմ կը քաղուի հողիս.  
Կոռնիկ, պահ մը կացի՛ր, ձայնիկդ ի հողիս,  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Քեզ խաբար հարցնողին չես տանիր տալապ,  
Ձայնիկդ անուշ կուգայ քան դըրի տօլապ:  
Կոռնիկ, Պաղտատ իջնուս կամ թէ ի Հալապ,  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Սրտերնիս կամեցաւ ելանք գնացանք,  
Այս սուտ աստուորիս դարդերն իմացանք,  
Աղուհացիկեր մարդկանց կարօտ մնացանք.  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Աստուորիս բաներն կամաց կամաց է,  
Մի՛ թէ Աստուած լըսէ դռնակն բացցէ.  
Ղարիբի սիրտն է սուգ, աչերն ի լաց է,  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Աստուած, քեզնէ խնդրեմ՝ մուկընէթ ու քէլամ,  
Ղարիպի սիրտն է խոց, ճիկէրն է վէրամ.  
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ,  
Կոռնիկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :



Ոչ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,  
Ջարկած է գիս շամփուրն, բռնած կրակին.  
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.  
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Պաղտատու կուգաս, կ'երթաս ի Սէհրատ,  
Թղթիկ մը գրեր եմ, տամ քեզ ամանաթ,  
Աստուած թող վըկայ լինի քու վըրադ,  
Տարեալ հասուցես դայն իմ սիրելեաց :

Գրեր եմ մէջ թղթիս թէ հոս մ'նացի,  
Օրիկ մը օրանց զաչերս չըացի,  
Սիրելիք, ձեզնէ կարօտ մ'նացի.  
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս :

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէպտիր,  
Երամ ես ժողվեր հազարներ ու բիւր,  
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.  
Կոռ'ւնկ, մեր աշխարհէն գնա՛, հեռացի՛ր :

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ



## ԿՐԱՄՔԱՄՔՈՒԼԻՆ

Կրամքամբուլին այն օդին է,  
Որ մեզի քաջ ծանօթ է,  
Որու համը չի տեսնելը  
Ուսանողին ամօթ է :

Բայց հանապազ իմ սիրելի,  
Մենք կոնծում ենք կրամքամբուլի :

Հայրս անդադար ինձ գըրում է,  
«Որդի ջան, շուտ աւարտէ,  
Ժամանակդ արագ անցնում է.  
Տե՛ս, գըրերդ լաւ սերտէ» :

Բայց նրա պարոն որդին,  
Կոնծում է կրամքամբուլին :

Թէ դարդս ու հոգս ինձ նեղում է,  
Թէ իմ քէֆը տեղը չէ,  
Թէ աղջիկս ինձ խաբում է,  
Ու էլ հաւատարիմ չէ.

Կ'ասեմ. «աղջիկ իմ նազելի,  
Քու տեղ կը սիրեմ կրամքամբուլի» :



Թէ լերդս ու թոքս մաշուել է,  
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,  
Թէ որ խմել ու քէֆ անելը  
Բժիշկն ինձ արդիւում է.

Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլլի,  
Ես կը կոնծեմ կրամբամբուլի :

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,  
Մահս էլ առաջիս տեսնեմ,  
Օղին կոնծեմ բաժակիս մէջ,  
Հոգեհանիս էլ կ'ասեմ.

«Վերջին անգամ, իմ պատուելի,  
Ե'կ, տաքեցնենք կրամբամբուլի,  
Կրամբամբուլի, կրամբամբուլի» :

\*\*\*\*\*

### ՀԱՅՐԱՆ

Հաբրբան, ջանէ ջան,  
Սիրել եմ սէրն երեսին,  
Անթառամ թերն երեսին,  
Ով իմ սիրածն ինձ չի տայ  
Աստըծոյ կրակն երեսին :

Հաբրբան, ջանէ ջան.  
Սարի թըրթընջուկ թաղա,  
Մեղր ու շաքար քեզ մաղա,  
Ինձ պէս նազանի աղջիկ,  
Քեզ պէս տըղին ո՞նց սաղայ :

Ձեր տան տակին վար կ'անեմ,  
Ձար Բրդերին քար կ'անեմ,  
Թող իմ սիրածն ինձի տան,  
Գըժութիւնս թարկ անեմ :

Աշուղի պէս խաղ ասա,  
Բլբուլի պէս տաղ ասա,  
Ինչքան որ դովես՝ արժեմ,  
Իմ մօր դովական փեսայ :

### ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք եղբարք, մարդկութեան մէջը,  
Հայ կընքեր է մեզ պատմութեան էջը.  
Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք :  
Եղբայրք, հայ ապրինք :



Հայ ապրինք, մեր հայրն է ան զիւցազուն,  
Որ ազատութիւն սովրեցուց մարզուն.  
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Մեր աշխարհն է սուրբ, մեր հողին վրայ  
Աստուած է քալեր, օրհնելով զՍղամ.  
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Հայն ու մարդկութիւն նոյն ունին օրրան,  
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.  
Կրօնի նախկին սեղանն է Մասիք.

Եղբայրք, հայ ապրինք :

Հայու պերճ անուն՝ ոչ միայն յերկիր,  
Այլ եւ եթերց մէջ շողայ լուսալիր.  
Քաջ Հայկին աստեղք անմահ են երկիրք.

Եղբայրք, հայ ապրինք :

Հայ ապրինք, ո՞ր ազգ կայ Հայու նման,  
Որ ունենայ հին պարճանքներ այսքան,  
Ո՞ր ազգ Հայուն պէս շքեղ հայրենիք.

Եղբայրք, հայ ապրինք :

Ըսէ՛ք, ո՞ր ազգին չորս առաքեալներ  
Երկնից թագաւորն է դեսպան զրկեր,  
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Ո՞վ կրնայ համբել սրբոց մեր զանուանք,  
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ.  
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Քրիստոսի ունինք անդրանիկ օրհնէնք,  
Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մենք,  
Հայը զարմացուց զերկիր եւ զերկինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Մեր ազգն հետեւող ճիշտ Յիսուսի,  
Որ խաչն այսքան դար առած յուսի,  
Ո՛չ, չ'խոնարհիր, չ'ըլլար դասալիք.

Եղբայրք, հայ ապրինք :

Այո, խաչին կեանք, կեանք է վշտալից,  
Այո, Հայուն կեանք, կեանք է ցաւալից,  
Բայց խաչն յաղթութեան ունի վեհ կնիք.

Եղբայրք, հայ ապրինք :



Մեր քաղցր հայրենիք, մեր թագ, դաւադան,  
Ամպերն են ծածկեր արեւի նման,  
Յուսացէք արեւ կուտայ մեզ երկինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Ո՛հ, ճակատադիր մեր, է՛է միշտ տրխուր,  
Զթշուտութեան ուտել հացն ու ջուր.  
Նոր երջանկութեան ապագայ մը ունինք.

Եղբայրք, հայ ապրինք :

Հայ ապրինք որ մեր որդիք ալ, եղբայրք,  
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք,  
Զըլլանք հայ անուան, չըլլանք նախատինք

Եղբայրք, հայ ապրինք :

Խ. ԵՊ. ՆԱՐ-ՊԷՅ

### ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստան, երկիր դրախտավայր,  
Դու մարդկայնոյ ցեղիս որրան,  
Դու եւ բնիկ իմ հայրենիք,  
Հայաստան, Հայաստան, Հայաստան :

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ  
Ոգեւորի ի նոր խրախոյս,  
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,  
Ի քեզ, ի քեզ, յո՛յս իմ միայն  
Հայաստան, Հայաստան, Հայաստան :

Հայաստան, անուն փարելի,  
Ի քեզ հանդիստ Նոյեան տապան  
Եգիտ, եւ քեւ ապրեցաւ Նոյ,  
Հայաստան, Հայաստան, Հայաստան :  
Գետք քաջառաջ արեւաբուրդիք  
Զհողդ բարի առնեն յուռթի,  
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,  
Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն  
Հայաստան, Հայաստան, Հայաստան :

Հայաստան, ծնող դիւցազանց,  
Եւ հրաշալեաց հանդիսարան,  
Քո զեփիւտին քաղցր է շընչիւն,  
Հայաստան, Հայաստան, Հայաստան :

Զոր շնչեցին եւ դօրացան  
Հայի, Արմենակ, Արամ, Տիգրան,  
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,  
Ըզքեզ յիշեմ, ըզքեզ սիրեմ,  
Ըզքեզ, ըզքեզ, սէ՛ր իմ միայն  
Հայաստան, Հայաստան, Հայաստան :



# ԵՐԳ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հայե՛ր, մինչեւ ե՞րբ արտասուենք,  
Լանք յուսահատ, յիշենք, հեծենք,  
Կնոջ անկ է ողբալ, կոծել,  
Մեզի՛ք քրտինք, արիւն թափել :

Կ'ուզե՞նք փրկութիւն,  
— Սիրենք զիտութիւն.  
Սիրենք միութիւն  
Ու աղատութիւն.  
Սիրենք Հայութիւն,  
Սահմանադրութիւն :

Մ'իթէ ողբո՞ւմ կանգնին, Հայե՛ր,  
Մ'եր բազմազգի աւերակներ.  
Արի կենա՛նք, գործե՛նք փութով,  
Լոյս ծաւալենք ջերմ եռանդով :

Կ'ուզե՞նք փրկութիւն, եւն. :


Թող մեր աչեր հուր արծակեն,  
Ու մեր լանջեր թընդան, տըրտիկն,  
Երակաց մէջ, փոխան արեան,  
Հայրենասէր բոցք ընթանան :

Կ'ուզե՞նք փրկութիւն, եւն. :

Անցա՛ն, անցա՛ն, սուգի դարեր,  
Սէր, յոյս ու լոյս խայտան յեթեր.  
Օ՛ն, շարժեցէ՛ք, ճակատք արի,  
Զարթի՛ք, առիւծք Հայաստանի :

Կ'ուզե՞նք փրկութիւն, եւն. :

ՄԻՆԱՍ ԶԵՐԱԶ



# ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Հայրենիքդ մոռցիր, կ'ըսեն օտարներ,  
Անխճեալ է, լոկ փուշ ունի եւ աւեր,  
Մ'եր հող դրախտ, ջուրն օշաբակ,  
Օղը քաղցր է, օղը քաղցր է :  
Եկուր պանդուխտ, սրտիկդ անոր հուրէրէ,  
Թէեւ ամուլ ամայի ըլլայ երկիրս հայրենի,  
Ես կը սիրեմ Հայաստան, ապրի կտրիճ  
Հայաստան :

Թող հայութեան առջեւ լոյս պատմութիւն,  
Թող տիեզերք մոռնայ Հայուն քաջութիւն.  
Ես կը սիրեմ, Հեմ մոռնար,  
Աննաման, աննաման,



Իմ մայրենի այրիացեալ Կիլիկիան,  
 Թէեւ ամուլ ամայի ըլլայ երկիրս հայրենի,  
 Ես կը սիրեմ Կիլիկիան, ապրի կտրիճ  
 Կիլիկիան :



### ՀՆՉԱԿ

Հեռաւոր երկիր նրստած դու նըժղեհ,  
 Հայրենեաց բախտին մօտուստ ես տեղեակ,  
 Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,  
 Յեղափոխութեան ձայնատու Հընչակ :

Նոր զաղափարի ցանած քո սերման  
 Ազնիւ պըտուղներ հասուննան արագ.  
 Կարին ու Պալիս որոտման նըման՝  
 Անդրանիկ շարժմունք ծընան քեզ, Հընչակ :

Չար բռնակալը Հայոց կեղեքիչ,  
 Վախէն պահուեցաւ ոսկի դահին տակ.  
 Խուլ Եւրոպայի թընդաց մեծ դահլիճ,  
 Հայը ցնցուեցաւ, կարմրեցաւ Հնչակ :

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա՝  
 Հասան, կարմրին, արեան նմանակ,  
 Կենաց եւ մահու սուրբ ժամ մերձենայ,  
 Կարմիր հրաւերիդ ակն ունինք, Հնչակ :

Կոչնակ հնչեցո՛ւր. հնչեցո՛ւր արագ,  
 Թո՛ղ հայք ոտք ելնեն — ծագէ մինչեւ ծագ.  
 Փշրէ՛ ժանտ շղթան, ծագէ նոր արեւ,  
 «Ազատ ենք», հնչէ՛, ոսկեղօծ Հնչակ :

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ



### ՀՈՎ ԱՐԷՔ



Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,  
 Իմ դարդին դարման արէք : —  
 Սարերը հով չեն անում,  
 Իմ դարդին դարման անում :

Ամպե՛ր, ամպե՛ր մի քիչ զո՛վ արէք,  
 Պարան անձրեւ թափէք, ծո՛վ արէք.  
 Գէշ մարդու օր-արեւը  
 Սեւ հողի տակով արէք :

Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,  
 Իմ դարդին դարման արէք : —  
 Ամպերը հով չեն անում,  
 Իմ դարդին դարման անում :



Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր ու ջրեր՛ը,  
 Մ'արմանդ մարմանդ վազող աղբիւրնե՛ր,  
 Մ'ի վե՛ր կացէ՛ք, իմացէ՛ք,  
 Տեսէ՛ք իմ սրբախ ցաւեր :

Հով արէ՛ք, սարե՛ր ջան, հո՛վ արէ՛ք,  
 Իմ դարդին դարման արէ՛ք :  
 Սարերը հով չեն անում,  
 Իմ դարդին դարման անում :

«Հազար ու Մի խաղ»

կ. վ.

\*\*\*\*\*

### ՀՕԴԱԼԼՕ ՋԱՆ

Հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ,  
 Աղջի՛կ սիրուն, աղջի՛կ անուշ, դալալլօ :

Կայնել ես աղբերակին,  
 Հօ՛դալլօ, ջան հօ՛դալլօ :

Շող կը տաս արեգակին,  
 Դա՛լալլօ, ջան, դա՛լալլօ :

Բո շող երեսին մեռնեմ,  
 Հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ :

Ունքերիդ աղեղնակին,  
 Դա՛լալլօ, ջա՛ն, դա՛լալլօ :

Մագերդ ոլորել ա,  
 Աչքերդ բոլորել ա,  
 Երկ՛օր ա, չեմ տեսել,  
 Իմ սիրտը մոլորել ա :

Փո՛ղ եմ ուզում, քեզ փող տամ,  
 Ոսկի տամ, ա՛չ թէ հող տամ.  
 Թէ դըրան էլ հաւան չես,  
 Հողիս հանեմ, քեզ փոխ տամ :

\*\*\*\*\*

### ՊԱՐԵՐԳ

Հօ՛յ, նազան իմ, նազան իմ,  
 Ջան նազան իմ, նազան իմ,  
 Նազա՛ն, դու բարով եկար,  
 Կանաչ սարերով եկար,  
 Ծաղիկ քաղելով եկար :

Գարնան սիրուն ծաղիկ ես  
 Հօ՛յ նազան իմ, նազան իմ,  
 Ինձ համար ազաւնիկ ես.



Ձան նազան իմ, նազան իմ.  
Գըլլիսի վրով պըտիտ տուր,  
Հո՛յ նազան իմ, նազան իմ :

Նաշխուն թեւ թիթեռնիկ ես,  
Ձան նազան իմ, նազան իմ,  
Եար ջան, դու բարով եկար,  
Կանաչ սարերով եկար,  
Շաքար ծամելով եկար.  
Բիշմիշ ուտելով եկար :

### Ծ Ո Վ Ա Կ

Ձայն տո՛ւր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,  
Ողբակից լինել չը կամի՞ս դժբաղդիս,  
Շարժեցէ՛ք գեփիւոք, ալիքը վէտ-վէտ,  
Խառնեցէք արտասուք այս ջրերիս հետ :

Հայաստանի մէջ անցքերին վկայ,  
Սկզբից մինչեւ ցարդ խնդրեմ ինձ ասա՛,  
Մի՞թէ միշտ այսպէս կը մնայ Հայաստան,  
Փշալից անապատ, երբեմն բուրաստան :

Մի՞թէ միշտ այսպէս Ազգս խղճալի,  
Կը լինի ծառայ օտար իշխանի,  
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին,  
Անարժան է Հայն եւ Հայի որդին :

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,  
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,  
Եւ ամէն կողմից պանդուխտ Հայազգիք  
Դիմեն դէպ իւրեանց սիրուն հայրենիք :

ՐԱՅՅԻ

### ԳՈՒԹԱՆԵՐԳ

Ձի՛դ տու, քաշի՛, ա՛յ եղը,  
Արա՛ հօ՛ հօ՛, արա՛, հօ՛.

Լուծըդ մաշի, ա՛յ եղը.  
Արա՛, հօ՛ հօ՛, արա՛, հօ՛.

Աստուած պահէ քու տէրը,  
Արա՛, հօ՛ հօ՛, արա՛, հօ՛.

Մի՛նն էլ տաշի, ա՛յ եղը :  
Արա՛, հօ՛ հօ՛, արա՛, հօ՛.



Մեր գութանը օղած ա,  
Եղանց ուսը նօթած ա.  
Վարէ՛ վարը, ա՛յ գութան,  
Հաղիւ խոփը զօղած ա :

Շողքըն՝ քնկաւ ծըմակին,  
Աստուած կը տայ մըշակին.  
Սուր գութանը ծիր գընաց,  
Տէր-մըշակը քամակին :

Սերմէ՛, սերմէ՛, ա՛յ մըշակ,  
Սո՛ւրը առ տո՛ւրբ ա քու փեշակ.  
Մինը հազա՛ր տուր, Աստուած,  
Քե՛զ ձէն կը տան տէր-մըշակ :

«Հայ Քնար»

Կ. Վ.

# ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր Արաքսի ափերով  
Քայլամուր գընում եմ.  
Հին հին դարուց յիշտակ  
Ալեաց մէջը պըտըում եմ :

Բայց նոքա միշտ յեղյեղուկ՝  
Պըզտոր ջըրով եղերքին  
Դարի՛ւ դարի՛ւ խփելով  
Փախչում էին լալաղին :

— Արա՛քս, ինչո՞ւ ձըկանց հետ  
Պար չես բընում մանկական,  
Դու դեռ ծովը չի հասած՝  
Սըղաւոր ես ինձ նըման :

Ինչո՞ւ արցունք ցայտում ես  
Քո սէգ, հըպարտ աչքերից.  
Ինչո՞ւ արագ փախչում ես  
Այդ հարազատ ափերից :

Մի՛ պղտորել յատակըդ,  
Հանդարտ հոսէ՛ խայտալով,  
Մանկութիւնը քո կարճ է,  
Շուտ կը համսիս դէպի ծով :

Վարդի թըփեր թող բուսնին  
Քո հիւրընկալ ափի մօտ,  
Սոխակները նոցա մէջ  
Երգեն մինչեւ առաւօտ :



Մըշտադալար ուռիներ  
Սառ ծոցի մէջ քո ջրերին՝  
Ճըկուն ոստըն ու տերեւ  
Թող թաց անեն տապ օրին :

Ափերիդ մօտ երգելու  
Հովիւք թող զան համարձակ,  
Գառն ու ուլը քո վըճիտ  
Ջուրը մըտնեն միշտ արձակ :

Մէջքը ուղղուց Արաքսը,  
Փըրփուր հանեց իր տակից,  
Ամպի նըման գոռալով՝  
Հապէս խօսեց յատակից.

— «Խիզա՛խ, անմի՛տ պատանի,  
Նիրհըս ինչո՞ւ դարեւոր՝  
Վըրդովում ես, նորոգում  
Իմ ցաւերը բիւրաւոր :

«Սիրելիի մահից յետ՝  
Ե՞րբ ես տեսել որ այրին  
Ոտքից գլուխ պճնուի  
Իր զարդերով թանկագին :

Որի՞ համար զարդարուեմ,  
Որի՞ աչքը հրապուրեմ, —  
Շատերն ինձ են ատելի,  
Շատերին ես օտար եմ...

«Իմ ազգակից գիժ ~~Կուրը~~  
Թէեւ այրի ինձ նման,  
Ստրկօրէն տանում է,  
Գայթակղիչի կուռ շղթան :

«Բայց նա ինձ չէ օրինակ,  
Ես Հայ՝ Հայիս կը ճանչնամ,  
Օտար փեսայ չուզելով,  
Ես միշտ այրի կը մնամ :

«Կար ժամանակ որ ~~եւ~~ էլ  
Շքեղադարդ հարսի պէս՝  
Հազար ու բիւր պըշրանքով  
Փախչում էի ափերէս :

«Յատակըս պարզ ու վըճիտ,  
Կոհակներըս ուրբուն,  
Լուսաբերը մինչեւ այդ  
Ջըրիս միջին էր լողում :

«Ի՞նչըս մնաց այն օրից,  
Ո՞ր ջըրամօտ գեղեքքո,



Ո՞րք իմ շէն քաղաքից,  
Ո՞ր բերկրալի տեղերըս :

«Տուրքը ջրբի ամէն օր  
Իր սուրբ ծոցէն Արարատ՝  
Մայրախընամ ինձ սընունդ  
Պարգեւում է լիառատ :

«Բայց ես այն սուրբ ջրբերով  
Սուրբ Յակոբայ աղբիւրին՝  
Պիտի ցօղեմ արտօրա՞յքն  
Ինձ ատելի օտարին :

«Մինչ իմ որդիք, ո՞վ գիտէ,  
Ծարաւ, նօթի, անտէրունչ,  
Օտար աշխարհ յածում են  
Թոյլ ոտքերով, կիսաշունչ :

«Հեռո՛ւ, հեռո՛ւ քըշեցին  
Բընիկ ազգն իմ Հայկեան,  
Նորա տեղը ինձ տուին  
Ազգ անկրօն, մոլեկան :

«Դոցա՞ համար զարդարեմ  
Իմ հիւրընկալ ափերը,  
Եւ կամ դոցա՞ հրապուրեմ  
Ճըպոտա, պըլշած աչերը :

«Քանի որ իմ դաւակունք  
Այսպէս կը մնան պանդուխտ,  
Ինձ միշտ սգաւոր կը տեսնէք,  
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ» :

Էլ չը խօսեց Արաքսը,  
Յորձանք տըւեց ահագին,  
Օղակ-օղակ օձի պէս՝  
Առաջ սողաց մոլեղին :

ՔԱՄԱՌ-ՔԱՌԻՊԱ

\*\*\*\*\*

## ՀԱՐՍՆԻՔԻ ԵՐԳ

Մենք, ա՛յ աղուոր աղջիկ, եկեր ենք ձերը,  
Քեզ հազար նազերով՝ տի տանինք մերը.  
Շարէն շապիկով, ազիզ լաթերով,  
Քեզ տանել ենք եկեր, մայրիկդ լացուր,  
Ոտքդ խատէմլի է, դուն մեզ խնդացուր :

Աղջիկ, քեզի բերեր ենք ֆիլտիշի սանտր,  
Սըրմաթեւ մազերդ հիւտում է ծանտր.  
Սէվլի պօյիդ վրայ սէվայ ծանտր,  
Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինձի,  
Եախուլթ՝ զիւմրիւթ, անդին քար եղիր ինձի :



Աղջիկ մըն ալ կու տանին ալով ու լալով,  
Ծամերն են հիւսեր սրմայի թելով,  
Գլուխն ալ են ծածկեր լահօռի շալով.  
Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինծի,  
Եախուի՛ զիւմբիւթ, անդին քար եղիր ինծի :

Հարանուկ, քու հագածդ ալ է,  
Ելիր խալուն վրայ քալէ.  
Քալէ ու մանաւրապ քալէ,  
Ալուկ փէշերդ վեր ծալէ :

Բաղնեց դուռը զարկին սաղը,  
Ներուրտաքըդ հիւսին մաղըդ,  
Տալուրտաքըդ քաշեն նաղըդ.  
Նազ ըրէ, նազդ վերցընեմ,  
Ալայ թօզ շաքար կերցընեմ :

### ՀԱՅ ԱՂԶԿԱՆ ԵՐԳԸ

Մեր հայրենիք թշուառ անտէր,  
Մեր թշնամեաց ոսնակոխ,  
Իր որդիքը արդ կանչում է,  
Հանել իր վրէժ, քէն ու ոխ :

Մեր հայրենիք շղթաներով  
Այսքան տարի կապկապած,  
Իւր քաջ որդեաց սուրբ արիւնով  
Պիտի լինի ազատուած :

Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,  
Որ իմ ձեռքով գործեցի.  
Գիշերները ես քուն չեղայ,  
Արտասուքով լուացի :

Նայիր նորան երեք գոյնով  
Նուիրական մեր նշան  
Թող փողփողի թշնամու դէմ,  
Թո՛ղ կտրծանուի սէդ հական :

Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,  
Պատերազմի գործերում  
Կարէ օգնել իւր եղբօրը՝  
Զանց չարեցի քս սիրուն :

Ահա՛ իմ դործ, ահա՛ իմ դրօշ,  
Շուտ ձի հեծիր քաջի պէս,  
Գընա՛ փրկել Մայր Հայրենիք,  
Պատերազմի վառ հանդէս :



Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ' մեռնի,  
Բայց երանի՝ որ իւր ազգի  
Ազատութեան կը զոհուի :

Գընա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,  
Ազգիս սէրը քաջալեր,  
Գնա թէեւ չեմ կարող գալ,  
Բայց իմ հողին քեզ ընկեր :

Գընա՛ մեռիր դու քաջի պէս,  
Թող չը տեսնէ թշնամին  
Քո թիկունքը, թող նա չասէ՝  
Թէ վատ է Հայաստանցին :

Ասաց, տուեց օրիորդը  
Իւր եղբօրը մի դրօշ,  
Մետաքսից էր, ազնիւ գործած,  
Ուր երեք գոյն կար որոշ :

Եղբայրն առաւ եւ ողջունեց  
Իւր սիրական քնքուշ քոյր,  
Առաւ զէնքը, սուր, հրացան,  
չեծաւ իւր ձին սեւաթոյր :

— Քոյրի՛կ, կանչեց քաջ պատանին,  
Մընաս բարեաւ սիրական.  
Այս դրօշակին պիտի նայի  
Ամբողջ բանակն հայկական,

Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած  
Արտասուքով ու կընքած՝  
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,  
Հայրենիքի նուիրուած :

Թէ մեռանիմ՝ դու մի՛ սրգար,  
Իմացիր որ աարեցի  
Դէպի մահու արքայութիւն,  
Իմ հետ քանի՛ թշնամի :

Ասաց, վազեց դէպի հանդէս  
Թըշնամիին հանդիման,  
Իւր արիւնով զնել յաւէթ,  
Ազատութիւն հայկական :

Ո՛հ, իմ սիրտը կտրատուեմ է  
Տեսանելով այսպէս սէր.  
Դէպի թշուառ մի հայրենիք,  
Որ ոտնակոխ եղած էր :



Սորա կէսը, կէսի կէսը,  
Գէթ երեւէր մեր ազգում:  
Բայց մե՛ր կանայք... ո՛ւր, եղիշէ,  
Ո՛ւր մեր « Տիկնայք փափկասուն » :

Ո՛հ... արտասուք ինձ խեղդում են,  
Այլ չեմ կարող բան խօսել,  
Չէ՛... թըշուառ չէ Հայաստան,  
Եթէ կանայք այսպէս են :

ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՅ

\*\*\*\*\*

### ԽՈՍՏՈՒՄԸ

Մինչեւ մահուան անյիշատակ ի շիրիմ,  
Մընամ քո սիրոյդ միշտ հաւատարիմ:  
Կրնայ ըլլալ որ դուն, աւա՛ղ, մոռնաս զիս,  
Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստմունքիս :

Ո՛վ իմ հրեշտակ, յոյս իմ միակ նազելի,  
Քեզի կեանք ու բաղդ բոլորն ալ տուի:  
Իմ մանկութեան տիոց դու սէր նախընծայ :  
Սիրտըդ գերել ես միշտ փափաքեցայ :

Սակայն, ափսո՛ս, երջանկութեան այն փափուկ,  
Մահուան ժանտ ձեռքով ըլլայ վաղանցուկ,  
Այս է վըճիռ՝ զոր զըրեց ճակտին մեր երկինք,  
Պէտք է իրարմէ անդարձ բաժնուինք :

Սակայն իմ սիրտ քուկին սրտէդ անբաժան,  
Քեզմէ չի զատուիր մինչ ի գերեզման,  
Սիրոյս յետին բաղձանք, յետին նըշանակ՝  
Քու քովդ է հանգչիլ մահուան քարին տակ :

Սոխակն երգէ իւր դայլայլիկ գիշերին՝  
Նըստի ի վերայ մեր ցուրտ դամբանին,  
Մինչ երկուքնիս մենք ի տեղւոյն այն դադար,  
Մահուան գրկաց մէջ նընջենք անդադար :


Վըկայ ըլլան աստեղք երկնից կամարաց,  
Չքեզ յաւիտեան սիրեմ անմոռաց,  
Չը պիտի դադրիմ երբեք ըսել քեզ՝  
« Ես քուկդ եմ յաւէրժ սիրով բոցակէզ » :

Ո՛հ, ի՞նչ ընեմ, ըսէ՛, սրտիս իմ հատոր,  
Սրի՛ւնըս կ'ուզես, թո՛ղ վազէ բոլոր:  
Բայց թէ անով ալ դո՛հ չըլլաս, ո՛վ անգութ,  
Իմ կեանքըս ալ դո՛հ կուտամ քու սիրոյդ :



Պիտի սիրես զիս յետ մահուան, զիտեմ ես,  
 Բայց անօգուտ տեղ արտասուք թափես,  
 Շիրիմիս վրայ անմըլախիթար ողբալով  
 Այն սիրելիդ՝ զոր կորուսիր շուտով :

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ



### ՔԱՅԼԵՐԳ

Մ'նայեցե՛ս բարեաւ, սէր իմ՝ սէր,  
 Հրաւէր մարտին որոտաց.  
 Թէ՛ չեմ քաջաց ես ընկերս  
 Զը կայ բաժին ինձ փառաց :


Մի՛ լար, հողույս իմ հատոր,  
 Դուցէ՛ դառնամ, ո՛հ, մի՛ լար.  
 Թ՛անկայց մարտին ես ի գոր,  
 Տեսցուք յերկինս մենք զիրար :

Եղբայրադաւ չէ նախանձ,  
 Որ բորբոքեալ յիս վառի,  
 Ի սուրբ հողոյ հայրենեաց  
 Բառնամ րզլում օտարի :

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

### ՔԱՅԼԵՐԳ

Հ. Յ. ԴԱՇԵԱԿՅՈՒԹԵԱՆ



Մշակ, բանուոր, բէնջպէր ախպէր,  
 Արի՛ք, միանանք, յառաջ գնանք...  
 Աշխատանքի դատի պաշտպան  
 Դաշնակցութեան թեւ թիկունք տանք :

Ա՛խ, մենք տանջուենք, քրտինք թափենք,  
 Արին վաստակ դատենք, զիդենք,  
 Շահագործող ցեղեր վատեն,  
 Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն :

Դէ՛հ, սեւ օրեր, բողոք բարձե՛ք,  
 Արին, քրտինք երկունք մոռէք,  
 Տանջանք, զրկանք, լեզու տռէ՛ք,  
 Սօցիալիզմի՛ ճամբան բացէ՛ք. . . :





## ՎԱՆԱՅ ԾԵՐԸ

Մ'ուրթ է գիշերս, ինչպէս սիրտս ալ,  
Եւ թուիս ալիք մըշտափըրփուր  
Վանայ ծովուն ծիածաւալ  
Հառաչանք լի են տըխուր :

Գոց են ամպով աստղունք . . . Եւ յոյս,  
Դեռ շատ հեռու է արշալոյս :

Ո՛վ նազունհի գուտար իմ Մ'եհիկ,  
Շուշան եւ վարդ դաշտաց մերոց,  
Եկո՛ւ, եւ հօրդ ծերուկ ու հէզ  
Առաջնորդէ՛ ի Զորն Հայոց :

Գոց են ամպով, եւլն. :

Գու սիրատարի կըտրիճ Արտակ  
Տըխուր երգեց, ո՛հ, այս գիշեր.  
Սէրն էր երգոց իր նըպատակ,  
Բայց թորդոմայ զաղէտս յիշէր :

Գոց են ամպով, եւլն. :

«Ո՛հ, ինչուան ե՞րբ հաճոյք եւ սէր,  
Առանց սուգի պիտի չըլլան» .  
Այսպէս ի քնարն իւր նա երգէր,  
Ու արցունքով աչք մեր լըցան :

Գոց են ամպով, եւլն. :

Հոս են շիրիմք մեր նախահարց,  
Նոճի մի ունի ամէն դամբան.  
Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,  
Հեճեն նընջող ոգւոց փոխան :

Գոց են ամպով, եւլն. :

Հին են ցաւերս, հեճեմ եւ ես,  
Ժամ է իջնեմ գերեզման,  
Երթամ վեհոց Հայոցն ի տես,  
Վանայ կոճակք թող զիս ողբան :

Եւ դու, Մ'եհի՛կ, կուլա՞ս անյոյս,  
Ո՛հ, ո՛չ, գընա՛ . . . զայ արշալոյս :

Մ. ՊԷՇԵՒԿԹՆԱՇԵԱՆ





## ՌԱԶՄԵՐԳ



(«Մարտէյէդ»ի եղանակով)

Յառա'ջ, գաւակէք հայրենիքի,  
Փառքի վըսեմ օրն է հասեր.  
Բռնակալըն ընդդէմ մեզի  
Արիւնալի գրօշն է պարզեր : (կրկնէ')  
Ձէ՞ք լըսեր դուք մեր սահմանաց  
Մէջ վայրենը վայրադ զօրաց,  
Որք կը խուժեն մեր գիւղերը՝  
Մորթոտելու մեր գաւկները :

Ի զէ'ն, Հայե'ր, ի զէ'ն,  
Կազմեցէ՛ք ձեր զունդեր,  
Յառա'ջ, յառա'ջ, թող պիղծ արիւն  
Ծըծեն մեր սուր հողեր :

Ի՞նչ կ' ուզեն այդ բիրտ ու դաժան  
Վոհմակները դաւաճանաց :  
Ու՞մ համար են այդ կապանքներ  
Եւ շրդթաներն վաղուց շինուած : (կրկնէ')

Մեզ համար են անոնք, Հայե'ր,  
— Ո՛հ, ի՛նչ ամօթ եւ նախատինք.  
Կը յանդըգնին մեզ դարձընել  
Ստըրկուլթեան դարերու հին :

Ի զէ'ն, Հայե'ր, ի զէ'ն, եւլն. :

Արդեօ՞ք օտար այդ հըրոսներ  
Մեր յարկաց մէջ պիտ' դան իշխել :  
Ի՛նչ, թողո՞ւնք որ պիղծ վարձկաններ  
Ըզդեանեն մեր վէս մարդիկներ : (կրկնէ')  
Ո՛վ երկինք . . . մեր հողն հայրենի  
Այդ բիրտ ուժի՞ն պիտ' խոնարհի,  
Եւ վատողի բըռնակալներ  
Պիտի լինի՛ն մեր բախտին աէր :

Ի զէ'ն, Հայե'ր, ի զէ'ն, եւլն. :

Դէ՛հ, դողացէ՛ք, բըռնակալներ  
Եւ անըզդամ դաւաճաններ.  
Ձի եկած է ժամ գերազոյն  
Ձեր ոճրապարտ վատ գործերուն : (կրկնէ')  
Մի սիրտ մի անձ կոռւի զինուոր,  
Մարք մեր ծընին հերոսներ նոր



Կազմ' ի կոխ' փոխան քաջաց  
Անկեալ ի դաշտ վասն հայրենեաց :

Ի զէ'ն, Հայե'ր, ի զէ'ն, եւլն. :

Հայրենիքի ո'վ դու սուրբ սէր,  
Վարէ' վրէժի մեր բազումներ :  
Աղատութիւն անմահական,  
Պաշտպաններուդ լեր օղնական : (կրկնէ')  
Դրօշակիդ տակ թող յաղթանակ  
Ընդառաջէ ի շեշտ արձակ,  
Ու թըշնամին օրհասական  
Լինի վրկայ մեր յաղթութեան :

Ի զէ'ն, Հայե'ր, ի զէ'ն, եւլն. :

\*\*\*\*\*

# ԿԱՄԱԿՈՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

—><—

Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ,  
Վեց դարու անմոռ վրէժի զըրահներ,  
Կատարն հայրենի լեռանց հեռագոյն'  
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն :

Հրակայ նուիրման

Տորմի'դ հըրաթեւ,

Կամաւո'ր բանակ,

Յառա՛ջ անսասան,

Յառա՛ջ անդեղեւ

Դէպի յաղթանակ :

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,  
Տարագիր Հայն իր կեանքը նորոգեց,  
Երէկ շղթայուած՝ այսօր ինքնավար,  
Յարեալ վեհօրէն դամբանէն խաւար :

Հրակայ նուիրման,

Տորմի'դ հըրաթեւ,

Կամաւո'ր բանակ,

Յառա՛ջ անսասան,

Յառա՛ջ անդեղեւ

Դէպի յաղթանակ :

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

\*\*\*\*\*





ԹԵԿՊԱՐ



Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛,  
Անուշի շորորով ես կորայ  
Անուշ, լուսնակ նորեկ է,  
Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛:

Նորեկ՝ բազ բոլորեկ է,<sup>30</sup>  
Անուշի շորորով ես կորայ,  
Շարան-շարան ամպի մէջ  
Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛.  
Մըտեկ ու մոլորեկ է:  
Անուշի շորորով ես կորայ:


Վարդ եմ քաղել շաղերով,  
Վեր եմ դրել մաղերով,  
Մի ջուխտ շամամ եմ կորցրել,  
Իրա կանաչ թաղերով:

Ծամեր ունիս ծիրանի,  
Բամին դա՛յ թեկ-թեկ անի,  
Էդ կապուտակ ծով-աչեր,  
Ո՞ւմ խեղճն ասես՝ կը հանի:

Ալ վարդ բացուեկ է հովին,  
Սոխակ կայնեկ է քովին.  
Բացի իրնից ձեռ տալու՝  
Մ'օ՛տ չի թողում ոչ ոքին:

«Հայ Գեղջուկ երգեր»

Կ. Վ.



Գ Ա Ր Ո Ի Ն

Ո՛հ, ի՛նչ անուշ եւ ի՛նչպէս զով,  
Առաւօտուց փչես, հովիկ,  
Ծաղկանց վրայ գուրգուրալով  
Եւ մաղերուն կուսին փափկիկ:

Բայց չես հովիկ իմ հայրենեաց.  
Գնա՛, անցիր սրտէս ի բաց:



Ո՛հ, ի՛նչ աղու եւ սրտազին  
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,  
Սիրոյ ժամերն ի յանտառին  
Զմայլեցան ի քո ձայնիկ.

Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,  
Գնա՛, թո՛ր սրտէս ի բաց :

Ո՛հ ի՛նչ մրմունջ հանես, վտակ,  
Ականակիտ եւ հանդարտիկ.  
Քու հայելոյդ մէջ անապակ  
Նային զիրենք վարդն ու աղջիկ.


Բայց չես վտակ իմ հայրենեաց,  
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց :

Թէպէտ թռչնիկ եւ հոփն Հայոց  
Աւերակաց թռչին վերայ,  
Թէպէտ պզտոր վտակն Հայոց  
Նոճինքու մէջ կը սողայ.

Նոքա հառաչք են հայրենեաց,  
Նոքա չերթան սրտէս ի բաց :

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

## ԹԱՂՈՒՄՆ ՀԱՅՈՐԴԻՈՅՆ



Ո՛չ փող դարկինք, ո՛չ արձագանդ լեռնասոյգ,  
Սարէ ի սար չարաշըշուկ տարին լուր,  
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայոյզ  
Երբ պատանւոյն բացինք մոայլ փոսին դուռ :

Գիշերական մունջ ստուերներ շուրջ կային,  
Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք.  
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,  
Սուղ էր պատեր ըզգաշտ, բլուր եւ երկինք :

Պէտք էէր դադադ, եւ ո՛չ ճերմակ պատանքներ,  
Որով դոցուէր ազատորդին, քաջորդին,  
Նա յետ մարտին կարծես յոգնաւ կու հանդէշը,  
Ու վերաբկուն կարմ' ր՝ բաւ էր իւր անձին :

Անձայն ու կարճ ննջեցելոց մի զրուցեց  
Մեր քաջ Տէրտէր, զինւոր Հայոց լ'Աստուծոյ,  
Գովեց ըզմահն եւ զքաջութիւնն իւր օրհնեց,  
Թոյլ չի տուաւ հառաչ մ'ու ճիշ հանելոյ :



Ֆայց երբ զլուխ ի բարձ դրինք հողաշէն,  
Տեսանք ըզքեզ ճակտին ու վէրքն պայծառ.  
Ո՛վ պատանեակ, ըսինք ամենքս մէկ բերնէն,  
Վասն հայրենեաց մեռար, դու շատ ապրեցար :

Գնա՛ դրուցէ Հայկայ զարմին մեծ որդւոց  
Որ կան այտեղ ազատ ու քաջ դեռ Հայեր,  
Որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց,  
Մէջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր :

Մէյ մ՛ալ քամին յանկարծ փչեց ցրտաշունչ,  
Լուսնին շողերն եկաւ գոցեց մթին ամպ.  
Ու մեր սարերն զերթ ուրուականք անմոռնչ,  
Սեւ զըլխնին տնկած զիտեն ապշուլեամբ :

Յայնժամ ցուրտ հող լեցուցինք իւր վրան,  
Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ.  
Ո՛չ այլ շքեղ արձանադիր, ո՛չ տապան,  
Զինքն մինակ թողուցինք իւր փառքին հետ :

Մ. ՊԵՏԻԿՈՍՇԵԱՆ



## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

\*\*\*\*\*

Ով մեծաքանչ դու լեզու,  
Ո՛վ հեշտ բարբառ մայրական,  
Փափկահնչիւն բառերուդ  
Նրման արդեօք այլ տեղ կա՞ն :

Դու որ նախ ինձ հրնչեցիր  
Սիրային, ո՛հ, հեշտ խօսքեր,  
Այն նախ զքեզ թոթովելս՝  
Դեռ իմ մըտքէն չէ ելեր :

Իմ մայրենի քաղցր լեզու,  
Կեա՛ց անոստան, կեա՛ց յաւէտ,  
Կեա՛ց միշտ լեզուդ Հայկարժան,  
Կեա՛ց ծաղկալից ծաղկաւէտ :

Ի՛նչ դառն վիշտ է սըրտիս,  
Երբ օտար տեղ ու լեզու՝  
Բըռնի իրեն զիս քաշէ,  
Սըրտէս արիւն կը հեղու :



Ո՛հ, այն օտարն ես սիրել  
Բնաւ չեմ կարող ի սրտէ,  
Ձէ՛, այն չէ քաղցր իմ լեզու  
Որ սիրով զիր սղջունէ :

Իմ մայրենի քաղցր լեզու, եւն.:

Լեզու համակ սիրաշարժ,  
Քանի ճոխ, պերճ ու պայծառ  
Մինչ կը հնչես դուն քեզի,  
Սըրտերն ամէն զողացար :

Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,  
Վեհ զիւցազանց պերճ երգ դու,  
Թօթուէ՛ փռչին խոր մութէն,  
Ե՛լ երեւան, պերճ երգ դու :

Իմ մայրենի քաղցր լեզու, եւն.:

Յաւերժական Սուրբ Դրոց մէջ  
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,  
Կըշռեալ անոյշ քու տողերդ  
Թող ամէն սիրտ արծարծեն :

Շնորհ ունել Արարչէն,  
Կամ պէտք ըլլայ աղօթել,  
Շըթունք սըրտէ բորբոքած  
Կ'աղաղակէ անարգել :

Իմ մայրենի քաղցր լեզու, եւն.:

Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

### ՀՈՎԻԿ ՀԱՅՐԵՆԻ



Ո՞ւր ես Հայրենեաց իմ հովիկ անո՛ւշ...  
Գարուն է եկել ծաղկամբ իր քնքուշ,  
Արեգ կը ժպտի բնութեան առջեւ,  
Ա՛խ, Հայո՛ց հովիկ, Հտա՞ս մեզ բարեւ...

Օտար երկնի տակ, զո՛ւրի մեր աստղերէն  
Երբ դարուն փայլի, ա՛խ, կ'արտասուեմ ես...  
Պանդուխտին համար արեւ փայլ չունի՛...  
Ո՞ւր ես, ա՛հ, ո՞ւր ես հովի՛կ հայրենի:



Գարուն՝ յորոյ ծոց չըլլար ծաղիկ  
Որ բուսած լինի ի Հայ Եղեմիկ,  
Գարուն չէ՛ Հայուն, ձմեռ կ'երևի...  
Ո՞ւր ես, ա՛խ ո՞ւր ես հովի՛կ հայրենի :

Ո՞ւր ես, քեզ կարօտ եմք հովի՛կ Մասեաց,  
Կարօտ քեզ հըծծիւն Արմաւեան սօսեաց.  
Մոռցա՛ր թէ մենք քեզ կ'սպասենք ի սուգ :  
Ո՞ւր ես, ա՛խ ո՞ւր ես հայրենեաց իմ սիւզ :

Ահա բնութիւն հեշտ հրաւէր կարդայ  
Տօնել լաղթութեան նորա զոտնկայ.  
Հալեցան սառույցք, զարթեր են ծաղկունք,  
Ո՞ւր էք հայրենեաց իմ սո՛յլք անուշունք :

Հովի՛կ, ա՛խ յերկար ոգւոց ձմերուն  
Եկուր մեզ բերել զՀայոց գարուն.  
Եկուր արթնցնել մեր վեհ պարճանքներ,  
Հովիկ հայրենի, մոռցա՞ր դու զՀայեր :

Մոռցա՞ր մեր աչեր, մեր սրտեր մոռցա՞ր,  
Ինչո՞ւ չես խառներ մեր յողբ եւ յաշխարհ,  
Ինչո՞ւ մեր քնար հեծէ յարտասուք  
Եւ դու չես թրթուր գայն, ո՛վ Հայոց սիւք :

Ա՛խ, մեր հայրենեաց բիւր աւերներէն  
Փռչեալ մը մեր Հարց ոսկրներէն.  
Բեր նոցա հառաչ, հըծծէ՛ մերին հետ,  
Ո՛վ Հայաստանեաց հովիկ կենսաւէտ :

Բեր Հայաստանի դէթ մէկ յիշատակ,  
Յափանց Երասխայ հասցուր մէկ կայլակ,  
Խառնին մեր հարց հետ արտասուք եւ ծիծաղ,  
Ո՞ւր ես հայրենի սիւք կենսախաղաղ :

Ո՛հ, զրկէ զՀայուն դու ճակատ եւ բոց,  
Արծարծէ ի նա հայրենավառ բոց,  
Հասիր միտքովար զգացմանց ազգասէր,  
Ո՞ւր ես հարց ծըծեալ հովիկ կենսաբեր :

Ո՞ւր ես... Հայ բամբռան շքնէ զօրութիւն,  
Գողթան քերթողաց բեր խոյլ եւ զարին.  
Հայոց սրտերուն ազդէ նոր խրախոյս,  
Հովիկ հայրենի արթնցուր մեր յոյս :

Խ. ԵՊ. ՆԱՐ—ՊԼՅ





Ե Ր Գ

Ո՞ւր էր թէ զեփիւոիկ  
Ըլլայի թափառիկ,  
Ոսկեթել մագերուդ  
Տայի համբուրիկ.

Ո՞ւր էր թէ վարդ գոհար  
Ըլլայի վառ ի վառ,  
Ընտրէի ինձ բազմոց  
Կուրծքըդ ձիւնափայլ.

Ո՞ւր էր թէ քանարիկ  
Ըլլայի ես թոչնիկ,  
Թըռչիւ, գալ ու շոյել  
Դէմքդ զեղեցիկ.

Կամ երազ խոստափուկ  
Որ գայի մենակուկ,  
Քունիդ մէջ խոռվել  
Քու սիրաբլդ փափուկ.

Ի՞նչ ըրի ես քեզի  
Որ ցաւոց այդպիսի  
Եւ անբոյժ հարուածոց  
Ըլլամ արժանի.

Հրեշտակ էր թըռաւ,  
Երազ էր որ անցաւ,  
Այդ քու սէրդ փափուկ  
Շուտով թոռմեցաւ :

Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

\*\*\*\*\*

Լ Ո Ր Ի Կ

\*\*\*\*\*


Պաղ աղբիւրի մօտ  
Կանգնած հայ աղջիկ,  
Սափորը ուսին՝  
Ինքն էր զեղեցիկ :



Առաւօտուց թոնիր վառ,  
Ես մայիլ եմ քեզ համար,  
Նրման ես կարմիր խընձոր, լորիկ,  
Լորիկ, լորիկ, ջանքմ' լորիկ :

Պաղ աղբիւրի մօտ  
Կանգնած հայ տըղայ,  
Հրացանը ուսին՝  
Ինքն էր քաջ հըսկայ,

Առաւօտուց թոնիր վառ,  
Ես մայիլ եմ քեզ համար  
Նման ես կարմիր խնձոր, լորիկ,  
Լորիկ, լորիկ, ջանքմ' լորիկ :



### ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՆԱՅ

Սարերի վըրով զընաց,  
Եա՛ր, եա՛ր,  
Արօտով, արօտով,  
Եարիս կարօտով.

Իմ եարը խըռով զընաց,  
Եա՛ր, եա՛ր,  
Մընացիր, մընացիր,  
Զինուոր զընացիր :

Ո՛չ լոր ելաւ, ո՛չ կաքաւ,  
Եա՛ր, եա՛ր,  
Արօտով, արօտով,  
Եարիս կարօտով.

Չեոնէս թըռնելով զընաց,  
Եա՛ր, եա՛ր,  
Մընացիր, մընացիր,  
Զինուոր զընացիր :

Ծաղիկ էր հոտով մոտով,  
Եկաւ, անցաւ իմ մօտով,  
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,  
Ու մընացի կարօտով :

Շէկ եարիս դըրի ճամբան,  
Ափսո՛ս, հասի իրան բան,  
Ճամբին օգնական չունի, —  
Սուրբ Կարապետ պահապան :



## Ե Ր Ա Ձ



Սարսափելի երազ տեսայ այս գիշեր,  
Որպէս թէ մի պարտիզի մէջ կանգնած եմ,  
Մշտադալար զարգարուած է կանաչով,  
Բիւր ծաղիկներ իւրեանց հոտը բուրում են :

Ուրախ ուրախ թռչունները երգելով,  
Ծառէ ի ծառ ողջունեցին իմ գալը,  
Ծաղիկները քնքուշ գլուխը խոնարհած,  
Ողջոյն տուին — դմայլեցաւ իմ սիրտը :

Գնում եմ խոր պարտիզի մէջ — մարդ չկայ,  
Ոչ մի տեղից ձայն, աղաղակ չէ լսում,  
Միայն հեռուից հասնում է ականջիս  
Ձրի ձայնը, բայց ջուրը դեռ չեմ տեսնում :

Իմ զնացած ճանապարհի ծայրումը  
Ահա բացուեց մի գեղեցիկ հրապարակ,  
Մարմարոնեայ, գեղեցիկաշէն աւազան,  
Ուր գործում էր ջուրը այնքան աղաղակ :

Երբ մօտեցայ աւազանին — ի՛նչ տեսնեմ,  
Մի հրաշագեղ, մատաղահաս օրիորդ,  
Աւազանի ափի վերայ խոնարհած՝  
Լուանում է իստակ ջրում մի լուացք :

Գերբնական է այդ աղջկայ տեսիլը,  
Ոչինչ չկայ նորա վերայ հողեղէն,  
Լուսեղէն է, թափանցիկ է մարմինը,  
Աչքը, յօնքը սեւ սալթի պէս փայլում են :

Ձըքնաղ իրան, մէջքը բարակ, խիկ կուրծքը  
Դուրս է նայում բարակ հագուստի տակից,  
Որպէս երկու հասունացած մեծ նոներ,  
Թաւիշապատ, խելք է թըոցնում դքուխից :

Կերպարանքը կանոնաւոր ու սիրուն,  
Ոսկիամայրն չարժէ նորա մօտ ոչինչ,  
Ծածանում են ուսի վերայ մազերը,  
Բերնի վերայ ծաղկում է քաղցր ժպիտ :

Երգ երգելով նա կտաւ է լուանում,  
Նորա ձայնը կախարդում է թովչի պէս.  
«Խաղա՛, աղբիւր, նա երգում է, խայտալով,  
Իմ կտաւը ճերմակացրո՛ւք ջրերով» :



Ո՛վ իմ չըքնաղ, առա՛, լսեմ, ո՞վ ես դու,  
Ես մօտեցայ եւ ասում եմ նազելով.  
Ո՛րտեղից ես եկած այստեղ եւ ինչո՞ւ,  
Այդ ի՞նչ բան է, լուանում ես երգելով :

Ինձ պատասխան տուեց այսպէս. «Պատրաստ կաց,  
Մահու պատանք լուանում եմ քո համար. . .»  
Եւ այս խօսքը ասած-չասած՝ ծուխի պէս  
Անյայտացաւ իմ աչքիցը ամէն բան :

Տեսնում եմ, որ կանգնած եմ անտառում,  
Ծառի կատարքը հասնում են երկնքին,  
Իւր մոայլոտ դադաթովը անտառը  
Սոսկալի էր ահաբեկուած իմ սրտին :

Լսելիքս ամբոխուեցան, վաստակեցան աչքերս,  
Կացինի ձայն հեռուից յանկարծ լսում եմ.  
Խիտ ծառերի մէջերից դուրս վազելով,  
Յանկարծ մի այլ նոր երեւոյթ տեսնում եմ :

Մի հաստաբուն բարձ կաղնի աճաղին,  
Նորա տակին նոյն օրիորդն է կանգնած,  
Կացին ձեռքին. ջարդոտելով մեծ կաղնին,  
Հրաժարում է իր դարաւոր արմատից :

Օրիորդը կտրում է ու երգում է,  
Նորա երգը սիրտ կախարդող է դարձեալ.  
«Կտրի՛ր, կտրի՛ր, սրաբերան իմ տապար,  
Փայտ կտրատիր, տախտա՛կ տաշիր իմ համար» :

— Իմ նազելի՛, իմ սիրակա՛ն, ասա՛ ինձ,  
Մօտենում եմ նորան դարձեալ ասելով.  
Ասա՛, ո՞վ ես եւ կամ ուստի՞ ես եկած,  
Է՛ր տախտակներ կտրատում ես երգելով :—

Իմ հարցմունքին այսպէս տուեց պատասխան.  
«Քո օրհասը մօտեցել է, տախտակներ  
Պատրաստում եմ ես քո դազաղի համար».  
Ասաց, դարձեալ անյայտացաւ. ես մնացի :

Քայքայուելով հողիս ու սիրտս, նայում եմ.  
Ահա դաշտը սեւանում է չորս կողմից,  
Ես չգիտեմ, թէ ինչ պիտի գայ զլիւիս,  
Բայց դողում եմ բոլոր մարմնով երկիւղից :

Երթում եմ ես. . . բայց ամպի պէս մի պատկեր,  
Հեռուիցը երեւցաւ իմ աչքին.  
Մօտ վազեցի, դարձեալ տեսայ. . . ես նորան,  
Մի դունաթափ, տխուր դէմքով ուրուական :



Մի ծանր մուրճ բռնած էր պինդ իւր ձեռքում,  
Որով գետինը փորում էր անգաղար.  
Ո՛հ, թէեւ այնքան զեղեցիկ էր իմ աչքին,  
Բայց երկիւղից սիրտս զարկում է յուսահատ :

Նա փորելով դարձեալ երգում է մի երգ —  
Մի սրտաշարժ, մի շատ տխուր, տրտում երգ.  
«Մո՛ւրճ իմ, մո՛ւրճ իմ, փորի՛ր դու ինձ մի փոս խոր  
Փորի՛ր մուրճ իմ, մի զրկաչափ զերեզման» :

Մօտենում եմ նորան դարձեալ խնդրելով,  
— Իմ նազելի՛, իմ սիրական ասա՛ ինձ,  
Ասա՛, ո՞վ ես եւ կամ ուստի՞ դու եկար,  
Կամ այդ փոսը դու փորում ես ո՞ւմ համար :

Իմ հարցմունքին պատասխանում է այսպէս.  
«Ես քո համար պատրաստում եմ զերեզման».  
Ճայլթեց սիրտս... եւ երկիւղից եւ ցաւից,  
Բայց կամեցայ տեսնել իմ այս օթեւան :

Երբ զնայցի ես փոսի մօտ նայելու,  
Սարսափելի մի ձայն եկաւ աւանջիւ.  
Յետ եմ նայում, տեսանում եմ այլ աղջիկ,  
Նոյնպէս չքնաղ, նոյնպէս մատաղ, թափանցիկ :

— Իմ նազելի, զոնէ դու ինձ զթա՛, ասա՛,  
Ո՞վ է փորող օրիորդը եւ դու ո՞վ.  
Ինչո՞ւ աղպէս զիշատում էք իմ սիրտը,  
Շուտ պատասխան տուր, նազելի, խղճալով : —

«Մենք երկուքս էլ քոյր ենք միմեանց անբաժան»,  
Օրիորդը պատասխանեց հեղնելով.  
«Նա երէցն է, իսկ ես կրտսեր հարազատ...  
— Բայց ո՞վ էք դուք, ես հարց արի գոռալով :

«Նա ալեւոր Հայաստանի հողին է...»,  
«Իսկ իմ անունս է «Անմխարանութիւն»,  
«Մենք շատ դարեր անցուցել ենք խոտով,  
«Եւ շատ մարդիկ փոս են ընկել մեր ձեռքով»

Ասաց, ժպտաց. կատաղաբար երկու քոյր  
Գլուրեցին ինձ փոսի մէջ, ես ընկայ...  
Շնչարգելուած նեղութիւնից զարթելով,  
Ստուգեցի, թէ երազ էր, որ տեսայ :

ԿՈՄՍ ԷՄՄԱՆՈՒԷԼ (Մ. ՆԱԼԲԱՆԳԵԱՆՅ)



## ԱՇՈՒՂԸ



Սեւ խաւարը իմ ընկերս է անրաժան.  
Ես չըզիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,  
Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան.  
Դիակները փափսում են անաւոր,  
Եւ պատմեցէք ձեր ցաւերն անպատում,  
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում :

Հին դարերից ցաւեր շալկած յամբօրէն,  
Հառաչելով անցաք արեան ծովերով,  
Համբերութեան դասեր առիք լեռներէն...  
Քնէ՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով.  
Եւ պատմեցէք ձեր ցաւերն անպատում,  
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում :

Այս իմ անճար քնարն ունի երեք լար.  
Այն՝ ողբաձայն, լալիան, խղճուկ, դողդոջուն,—  
Ի՞նչպէս ողբամ ձեր ցաւերն անհամար,  
Սրտեր վառեմ, արցունք քամեմ ես անհուն...  
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում.  
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում :

Տառապանքի, սուգ ու սեւը ինձ ընկեր  
Մարդ հմնան իմ արիւնստ վաթանում.  
Լուռ են շուրջս լեռներ, ձորեր, շիրիմներ.  
Լոկ քամին կողկողազին մրմնջում...  
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,  
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում...

Ես էլ ցաւի դաշն կապեմ քամու հետ,  
Եւ արցունքի երգեր հիւսնք միասին.  
Նա խաղում է ամպրոտների շանթի հետ,  
Նա յոյզ ու բոց կուտայ նաեւ մեր երգին.  
Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին  
Կը պատմեն ձեզ տառապանքներն աշխարհին:

Ունա՛, քամի, հազար ու մի ձայներով,  
Թո՛ղ սարսուռն լեռներ, ձորեր, անդունդներ.  
Անցի՛ր մէկ-մէկ դիակների վրայով,  
Լիզի՛ր վէրքեր ու հաւաքիւր հառաչներ...  
Կոյր աշուղը, մրրկաշունչ, խօլ քամին,  
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին:

Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ հեռուն,  
Հառաչանքներ, խոր-խոր ցաւեր շալկած.  
Վե՛ր սըլացիր դէպի երկինքը անհուն,



Գտի՛ր դահը, ուր բազմած է մի Աստուած :  
Թէ անդօր է սրբել արցունքն աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ՛, եւ ոչ Աստուած երկնքում :

Փշիր վրան անեղաշունչ որոտով,  
Թող իր դահը դողայ այնտեղ եւ Աստուած.  
Թող երկինքը մի՞նի իր վառ աստղերով,  
Տիեզերքը դարձրո՛ւ քառս, աւերած...  
Թէ անդօր է այն Աստուածն աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ, եւ ոչ Աստուած երկնքում...

Զուր ես խառնում ծեր ալիքներն աշուղին.  
Այնտեղ միայն հին օրերի խոհեր կան.  
Դու խօս գիտես լեզու, խօսք տալ ժայռերին,  
Նրանց ասա՛, թող քեզ պատմեն, ի՞նչ տեսան...  
Երբ անդօր է այն Աստուածն աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ, եւ ոչ ալ Աստուած երկնքում...

Անցիր հանդարտ շիրիմների վրայից,  
Հողի տակ էլ թշուառները քուն չունին.  
Շարան-շարան հողաթմբի խորքերից,  
Խուլ մրմունջներ գուցէ լսես ցաւադին...  
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,  
Գահ էլ պէտք չէ, եւ ոչ Աստուած երկնքում...

Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին,  
Սեւ երգ կ'ասեն, ցաւ կը պատմեն աշխարհին.  
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ երկրում,  
Գահ էլ պէտք չէ, եւ ոչ Աստուած երկնքում. . .

Խօսի՛ր քնար... Արար-աշխարհ թէ լոի,  
Ցաւի, արեան, տառապանքի լուռ ծոցում,  
Կոյր աշուղը հառաչանքի պարաք ունի՛  
Թշուառութեան ու անէծքի վայրերում.  
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,  
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք :


Երեք լար կայ, մէկը մէկից աշաւոր.  
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում,  
Եւ երրորդը — այն ամենից թունաւոր,  
Անէծք ունի իր թրթուռն խաղերում.  
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,  
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք :

Սեւ բռնութեան աւերած զինուորներ,  
Խաղան աւեր բոց փոեցիք ձեր ոտքով,  
Բնակութիւն, շէն քաղաքներ ու տներ,  
Անապատի վերածեցիք անվրդով.  
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,  
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք :



Դիակների վիշտը լացի ու ցաւեր . . .  
Քանի՜ դարեր լուկ ողբ ու սուգ ենք ասում,  
Այժմ անէ՛ծք, դահիճներին մարդակեր,  
Վրէ՛ժ միայն, լուկ վրէժ եմ պահանջում . . .  
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,  
Թող ողջ աշխարհ կարդայ Հային նախատինք . . .

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ



### ՍԻՐՈՒՀԻՍ

Սիրուհիս, քեզ համար  
Կեանքս կէս եղաւ,  
Քո անունն էր միայն՝  
Որ ինձ կեանք տրւաւ :

Աղջիկ դու սիրուն,  
Շքեղ անունով,  
Սեւորակ աչքով,  
Երկնածիր ունքով,

Այրուի՛ քո սիրտը,  
Այրեցիր հըրով,  
Վառուի քո սիրտը,  
Վառեցիր սիրով :

Մանուշակ, նունուֆար,  
Վարդ, մեխակ, շուշան  
Ոչինչ են ինձ համար,  
Իմ անդին հոգեակ :

Մօրեցդ գաղատե՛լ  
Արի մեր պարտէզ,  
Ման գանք միասին,  
Սիրո՛ւն, դու եւ ես :


Այրուի՛ քո սիրտը,  
Այրեցիր հըրով,  
Վառուի քո սիրտը,  
Վառեցիր սիրով :

Բայց ափսոս, չեմ կարող,  
Որ դամ քեզ տեսնեմ,  
Իմ վերաւոր սրտին  
Կարօտը առնեմ :

Դէ, բուսական է,  
Նայիր երկնքին,  
Կաղոյտ երկնքին,  
Քո խղճմտանքին :



Այրուի՛քս սիրտը,  
Այրեցիր հըրով,  
Վառուի քս սիրտը,  
Վառեցիր սիրով :



### ՍԵՄԵՐՃԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

\*\*\*\*\*

Վէրքերով լի ջանֆիտայ եմ.  
Թափառական ասուն չունիմ.  
Եարիս փոխան գէնքս եմ դրկել,  
Մի տեղ հանդիստ քուն չունեմ :

Արիւնստ երկիր, սուղ ու շիւան,  
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,  
Տանջուած հայրենիքի սէրը  
Ձի վախեցուց ինձ վտանգից :

Ես կոչուեցայ ջանֆիտայի,  
Դարձայ զինուոր գաղափարի.  
Թող իմ թափած արեան շիթեր  
Օրինակ դառնայ Հայ զինուորի :

Մակեդոնիա իմ եղբայրս  
Իմ խաչովս պսակուեց.  
Եղբայրական սիրուն գէնքով  
Գաղան խուժանն խորտակուեց :

Ահա՛ հանդիստ հող կը մանեմ,  
Յոյսս դուք էք ընկերներ,  
Շարունակէ՛ք մեր սուրբ գործը,  
Դաշնակցութեան վեհ քաջեր :

Կախաղանից երբ որ քամին  
Ինձ տարրերեց ճօճալէն,  
Յիշէք Պետրոս Սեմերճեանին,  
Թշնամիէն վրէժ գտալէն :

\*\*\*\*\*





## ՔԵԼԵՐ ՅՕԼԵՐ

Քէլեր, ցօլեր՝ իմ եարը,  
Արեւի տակին  
Քէլեր, ցօլեր, իմ եարը,  
Սարի սովոր, մեն մենաւոր,  
Շէկ տղայ, շող արեգակ,  
Թո՛ղ արեգակ, ե՛կ, տղայ :

Քէլեր, ցօլեր՝ իմ եարը.  
Աղբիւրի ակին  
Քէլեր, ցօլեր՝ իմ եարը,  
Կանաչ առուով, ցանաչ առուով,  
Ե՛կ, տղայ, բաղովն արի,  
Շաղովն արի, շէ՛կ տղայ :

Քէլեր, ցօլեր՝ իմ եարը.  
Գերանդին ուսին  
Քէլեր, ցօլեր՝ իմ եարը,  
Հով ծառի տակ, զով ծառի տակ,  
Ե՛կ, տղայ, հունձ ես արել,  
Քրտինք դառել, շէ՛կ տղայ :

Քէլեր, ցօլեր՝ իմ եարը,  
Ջան աչքի լուսին,  
Քէլեր, ցօլեր՝ իմ եարը,  
Հով է, քրնիր, զով է, քրնիր,  
Շէկ տղայ, հունձ ես արել  
Շատ բեգարել, շէկ տղայ :

«Հայ Գեղջուկ երգեր»

Կ. Վ.

## ՀԱՅՐԵՆԻՔ

Օղդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն.  
Պէս պէս գոյնով ծաղիկներդ դալարուն.  
Չեն դադրիր աշխատելուց օրն ի բուն,  
Քու հարազատ մշակներդ, Հայրենիք :

Երբ որ լինի դարնանամուտ նոր դարուն,  
Կը բազմանան վտակներդ, Հայրենիք,  
Շարիշար ցնծութեամբ երգելով զուարթուն,  
Շարժվում են բանականերդ, Հայրենիք :



Մարդիկ կուգան քու սարերը ման գալու,  
Իբր որսորդ եղնիկներդ որսալու,  
Ե՛րբ կը փոխեն երգը ուրախ կարդալու,  
Քու սգազգեսաց սոխակներդ, Հայրենիք :

Դուն դրախտն ես, քեզի սուրը զիւրքը վիայ,  
Քու միջիցդ անմահութեան հոտ կուգայ,  
Հազար ափսոս լուսաւորուած չեն հիմայ,  
Ժողովուրդ, գաւակներդ, Հայրենիք :



# Յ Ա Ն Կ

|                             |    |
|-----------------------------|----|
| Ազատն Աստուած այն օրից      | 3  |
| Ազատութեան այն վառ սէրը     | 5  |
| Ալագեազ բարձր տեղ ա, եար    | 6  |
| Ալագեազ բարձր սարին         | 6  |
| Ալագեազ սարն ամպել ա        | 7  |
| Ալ այլուդս կորաւ ձեր դուռ   | 8  |
| Ահա ելաւ լուսինն արծաթ      | 10 |
| Ահա մօտեցան մահիւտն ժամերս  | 11 |
| Աղջիկ աղուոր, աղջիկ աղուոր  | 12 |
| Աղջիկ եմ տանք դրած          | 13 |
| Աղջկերք, պար բռնեցէք        | 14 |
| Ամպել ա, ձիւն չի գալի       | 15 |
| Ա՛յ աղջիկ, ծամով աղջիկ      | 16 |
| Անի քաղաք, նստեր կուլամ     | 17 |
| Այգուն, այգուն իմ խըցկի մօտ | 19 |
| Անուշ քնիկ աչերն առեր       | 20 |
| Աշխոյժ նաւաստին             | 22 |
| Առաւօտ լըր մոտաւ արտ        | 23 |
| Ապառաժուտ լեւան մը կող      | 24 |
| Առաւօտուն բարի լուս         | 25 |
| Առտուն կանուխ թէ ելլենք     | 27 |
| Արեւ թըռվըռելով ելաւ        | 28 |
| Արի՛ իմ սոխակ               | 29 |



|                                   |    |
|-----------------------------------|----|
| Ազատութեան սիրոյն համար           | 30 |
| Արիք Հայկազունք                   | 31 |
| Բա՛մ. փորձումն                    | 33 |
| Բերդից դուրս ելայ                 | 36 |
| Բլբուլ Թռաւ բարձր քեարին          | 37 |
| Գարահիսար լեւան կրծքին            | 38 |
| Գըլգըլալով ջուր է իջնում          | 39 |
| Գնա՛, գնա՛, հետիդ եմ              | 40 |
| Դարդըս լացէք, սարի սըմբուլ        | 41 |
| Դու զո՛ւլ խնդրես, մայր իմ անուշ   | 42 |
| Դուն նստեք եւ ճամբաներուն անկիւնք | 44 |
| Ի՛կ իմ սրինգ                      | 60 |
| Ես լսեցի մի անուշ ձայն            | 48 |
| Ես մէկ ծառ եմ ծիրանի              | 49 |
| Ես սարէն կուգալի                  | 50 |
| Երբ ալեկոծ ծովին վրայ             | 51 |
| Երբոր բացուին դռներն յուսոյ       | 53 |
| Երթիկ, երթիկ բռնեւ ես             | 54 |
| Չա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զընգը         | 55 |
| Չուարթ նաւաստին                   | 55 |
| Էս գիշեր, լուսնակ գիշեր           | 57 |
| Թէ Թեւ ունէի                      | 58 |
| Թէ իմ ալեւոր հերքս սեւնային       | 62 |
| Թէ հայրենեաց պատկառիր             | 63 |
| Ի գէ՛ն, Հայեր, ի սուր եւ ի հրացան | 66 |
| Ի բիւր ձայնից բնութեան շրքեղ      | 67 |
| Իբրեւ արծիւ սաւառնում ես          | 69 |

|                                         |     |
|-----------------------------------------|-----|
| Իմ հայրենեաց հոգի վարդան                | 70  |
| Իմ հայրենիք զիս կը կանչէ                | 71  |
| Իմ սիրելի զաւակունքս                    | 73  |
| Ինձի կ'ըսեն, ինչո՞ւ լուռ ես             | 75  |
| Ինչո՞ւ ապշած ես, լճակ                   | 76  |
| Լէփօ, լէ, լէ                            | 78  |
| Լէ՛պ, հօ՛, լէ, լէ                       | 79  |
| Լըճի մէջ նաւակը                         | 79  |
| Լուսին չկար, մութ գիշեր էր              | 82  |
| Լուսնակ գիշեր, բոլորովին քուն չունիմ    | 84  |
| Լռեց — Ամպերը եկան ծածկեցին             | 85  |
| Խաւարել եմ, ինչպէս գիշեր                | 86  |
| Միծեռնա՛կ, ծիծեռնա՛կ                    | 87  |
| Կռունկ, ուստի՞ կուգաս                   | 88  |
| Կրամբամբուլին այն օղին է                | 91  |
| Հաբրբան, ջանէ ջան                       | 92  |
| Հայ ապրինք, եղբարք                      | 93  |
| Հալաստան, երկիր դրախտավայր              | 96  |
| Հայե՛ր, մինչեւ ե՛րբ արտասուենք          | 98  |
| Հայրենիքդ մոռցիր, կ'ըսեն օտարներ        | 99  |
| Հեռաւոր երկիր նստած դու նմոզեց          | 100 |
| Հո՛ւլ արէք, սարեր ջան, հո՛ւլ արէք       | 101 |
| Հօ՛ղալը, ջան, հօ՛ղալը                   | 102 |
| Հօ՛ւ, նազան իմ, նազան իմ                | 103 |
| Չայն տո՛ւր, ո՛ւլ ծովակ, ինչո՞ւ լռում ես | 104 |
| Չիգ տու, քաշի՛, ա՛յ եզը                 | 105 |
| Մայր Արաքսի ափերով                      | 106 |



|                                       |     |
|---------------------------------------|-----|
| Մենք, ա՛յ ազուոր աղջիկ, եկեր ենք ձերը | 111 |
| Մեր հայրենիք թշուառ անտէր             | 112 |
| Մինչեւ մահուան անլիշտասկ ի շիրիմ      | 116 |
| Մ'նացե՛ս բարեաւ, սէր իմ սէր           | 118 |
| Մշակ, բանոր, բէնջպէր օխպէր            | 119 |
| Մութ է գիշերս, ինչպէս սիրտս ալ        | 120 |
| Յառա՛ջ, զաւակք հայրենիքի              | 122 |
| Յառա՛ջ, նսմատակ ցեղ ի անմահներ        | 124 |
| Շորորա՛, Անուշ ջան, շորորա՛           | 126 |
| Ո՛հ, ի՛նչ անուշ եւ ի՛նչպէս զով        | 127 |
| Ոչ փող զարկինք, ոչ արձագանգ           | 129 |
| Ով մեծաքանց դու լեզու                 | 131 |
| Ուր եւ հայրենեաց իմ հովիկ անուշ       | 133 |
| Ուր էր թէ վեփառիկ                     | 136 |
| Պաղ աղբիւրի մօտ                       | 137 |
| Սարերի վրով գնաց                      | 138 |
| Սարսափելի երազ տեսայ այս գիշեր        | 140 |
| Սեւ խաւարը լմ ընկերն է                | 146 |
| Սիրուհիս քեզ համար                    | 150 |
| Վերքերով լի ջանքիտայ եմ               | 152 |
| Քէէր ցոլեր իմ ետք                     | 154 |
| Օղբ սիրուն, ջուրդ սիրուն              | 155 |





